

# ԱՐՈՒՍԱՀԼ ՀԱՅ

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԵԱՅ ԵՒ ՎԱՆՈՐԷԻՑ ԵԳԻՊՏՈՍԻ

الشيخ ابي صلح الارمني


---

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ


---

ՎԵՆԵՏԻԿ — Ի ՍՈՒՐՐ ԴԱԶԱՐ

1933



ԱՐՈՒՍԱՆԼ ՆԱՅ



# ԱՐՈՒՍԱՅԼ ՀԱՅ

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՅԵԱՅ ԵՒ ՎԱՆՈՐԷԻՅ ԵԳԻՊՏՈՍԻ

الشيخ ابي صلح الارمني


---

ԵՐԿՐՈՐԳ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

---

ՎԵՆԵՏԻԿ - Ի ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐ

1988



Ա.

Փէ դարուն կիսէն վերջ՝ Սաքս-կոթայ զուքսն՝ իր ազգակից և կրօնակից (լութե-րական) եթովպագէտ Յհ. Միքայէլ վան-սլէբ (Wansleb կամ Vansleb, ծնեալ յԼիբֆուրդ, 1635 + 1679), երիտասարդը խաւրեց յԱփրիկէ, Ղփտեաց և եթովպաց-ւոց կրօնից վրայ տեղեկութիւն և արեւելեան հին ձեռագիրներ ստանալու. զոր և ըրաւ սա, բայց չկրցաւ գոհացնել զզուքսը: Ինքն ալ տժգոհ՝ գնաց ի Հոովմ, կաթողիկեայ դաւանանքն ընդունեցաւ, և մտաւ ի կրօն Դոմինիկեանց. յետոյ գնաց ի Պարիս, ուր ժԳ Լուդովիկոսի բանասէր պաշտօնեայն Գոլպերտ՝ նորէն ղրկեց զնա յԵգիպտոս, արեւելեան ձեռագիրներ ժողովելու. որ և յաջողեցաւ 330էն աւելի արաբերէն, թուրքարէն և պարսկերէն գրքեր հաւաքել և բերել: Ասոնց թուէն էր և արաբերէն պատմութիւն մի Աքու Սալիհ Հայ անուանելոյն: Չեռագիրն բաւական հին է, 1338ին գրուած. հեղինակն յայտնապէս հնագոյն, ժԳ դարուն սկիզբները վախճա-

նած: Գրքին առաջին 20 թուղթերն կորած ըլլալով՝ անոր բուն վերնագիրն կամ անունն այլ չկայ. բայց ետեւի գրուածներէն՝ (որ բովանդակեն 113 թուղթ), յայտնուի՝ որ պատմութեան նիւթն է՝ մեր վերը նշանակածը: — Արարագէտ և արեւելաքրքիր բանասէրը, ինչպէս Գատրումէր այս դարուս, և մանաւանդ Բենոդոյ (Renaudot) ԺԸ դարու սկիզբում, շատ բան քաղեցին այս պատմչէս, արեւելեան՝ և յատկապէս Աղեքսանդրիոյ եկեղեցւոյ կամ պատրիարքաց վրայօք: Ասոնց թարգմանած կտորներէն մենք այլ ատենօք օգտուելով՝ ազգային տեղեկութիւններ տուած էինք (ի Ներս. Շնորհալի և Պարագայ խր. երես 162-70): Արուսահլ՝ ասոնցմէ աւելի Հայոց վրայօք գրած կարծուի ի բանասիրաց. որովհետեւ հիմայ Հայոց վրայ պատմելով կու սկսի գիրքն, ուսկից հետեւցնեն՝ թէ կորսուած առաջին մասն այլ առաւելապէս մերայոց վրայօք էր:

Երկու դարէ աւելի շատ օտարաց այլ մեզ այլ ցանկալի՝ բայց գրեթէ անմատչելի եղած այս պատմագիրքս, (թէ արարերէն լեզուով և թէ դժուարընթերց գրչութեամբ ըլլալուն), վերջապէս այս տարուանս սկըզբում՝ Փռանկաց ուսմանց պաշտօնէի շնորհիւ առ Անգլիացի գիտնականս, ի լոյս

ընծայեցաւ, թէ բնագիր լեզուան և թէ անգլիարէն թարգմանութեամբ, Էշետու անուամբ (B. T. Evetts M. A.) գիտնականի համալսարանին Օքսֆորտի, ուր և տպագրեալ է, ճոխ ծանօթութեամբը, որ գրեթէ հեղինակին գրածէն աւելի են. և զորս շատ մասամբ տուած է գիտնագոյն մի, Բըտլեր Ալփրետ (Butler), հեղինակ հետաքննելի գրքի մի՝ Եգիպտական հին եկեղեցեաց վրայօք, (The ancient Coptic Churches of Egypt). ձեռնտու եղած է մասամբ և բազմահմուտ հայագէտ, և քանի մի տարիէ ի վեր ծանօթ մեր ազգային բանասիրաց և ասոնց օրագրաց մէջ՝ Կոնիքիեր (F. Fr. Conybeare), որ և զուարթառատ ազնուութեամբ ընծայեց մեզ օրինակ մի Աբուսահլի թանկ և հետաքրքրական գրոց. որոյ համար կարելոր պարտք համարիմք հրապարակել հոս մեր շնորհակալութիւնը:

Գալով առ հեղինակն, զոր ըստ մեր մատենագրաց և ազգային սովորութեան՝ Արուսահյ անուանեմք (փոխանակ Սալիհ ըսելու), ո՞վ և որո՞յ որդի և ե՞րբ յԵգիպտոս եկած ըլլալն՝ չի յիշուիր. որովհետեւ, ըստ վերոյգրելոցս, գրքին սկիզբն պակաս ըլլալով՝ իր վրայօք ըսածն այլ (եթէ ըսած էր) պակսի. բայց իր պատմու-

Թեան մէջ շատ հեղ զինքն և իր ժամանա-  
 կակիցները յիշելէն՝ յայտնուի, որ 1170էն  
 մինչեւ 1208 տարին ներկայ է եղեր ոմանց  
 իր պատմած դիպաց և անձանց: Բայց  
 աւելի ստոյգ ըսելով, ոչ միայն իր գրածին  
 սկիզբն պակասած է, այլ կերպով մի և բո-  
 լոր գրուածն այլայլեալ, բայց ոչ խան-  
 գարեալ: Վասն զի, ձեռագրին ընդօրինա-  
 կողն՝ այսպէս կ'աւարտէ. «Հոս վերջանայ  
 » պատմութեանս հեղինակին գործն, զոր՝  
 » անկարելի էր իրեն ամբողջացնել, եր-  
 » կրիս երեսաց ընդարձակութեանն համար՝  
 » ընդ արեւելս և ընդ արեւմուտս. սակայն  
 » այնչափ նիւթ հաւաքած է՝ որչափ ոչ  
 » ոք իրմէ զատ, և մեծ խնամքով ըրած է  
 » գործը. միանգամայն և համառօտ է ի բա-  
 » ցատրութեան, վասն զի աւելորդ համա-  
 » ըրած է ճոխարանել ի պատմութեան: Իսկ  
 » իսեղճ, թշուառ և տկար գերիս՝ ընդօրի-  
 » նակողս, ինչ որ գտայ՝ զայն օրինակեցի,  
 » առանց աւելցնելու կամ պակսեցնելու,  
 » (բայց վերջը կ'ըսէ թէ համառօտեր է),  
 » առաջնորդութեամբ Շէյխ Ար-Բայիս ալ-  
 » Աքրամ Ապուլֆարաճի, որդւոյ Շէյխ  
 » Ռափայելի, որդւոյ Ապուլ Ֆարապի քա-  
 » հանայի Սանդուք ալ-իլմ (Գիտութեանց  
 » սնտուկ) անուանելոյ, որ Մսրայ Աշ-շամ  
 » դղեկի եկեղեցւոյ քահանայից աւագերէցն

» էր: ... Ընդօրինակութիւն գրոցս աւար-  
 » տեցաւ չորեքշաբթի օր, Բառնա ամսոյ  
 » երկուրին, անբիժ Մարտիրոսաց 1054  
 » թուականին, որ է 738», (հիճրէղի, և  
 1338 թուին Քրիստոսի): — Այս վկա-  
 յութեամբ այլ հաստատուի որ գիրքը պա-  
 հողքն, ընդօրինակողն և հեղինակն այլ  
 քրիստոնեայ էին, գուցէ և ամենքն այլ  
 քահանայ. Արուսահլ եւս Շէյխ կոչուի: Յե-  
 տոյ խոստովանի ընդօրինակողն՝ որ կա-  
 րեւոր բան մի դուրս չէ թողած ի հեղի-  
 նակէն:

Արուսահլի պատմածներն շատ ճիշդ և  
 ստոյգ են, նա և ժամանակագրական և տե-  
 դագրական մասամբք, միայն թէ շատ տեղ  
 ոճով կարգ մի չունի գիրքն. ետեւ առաջ  
 գրէ պատմելիքը. վանքի կամ եկեղեցւոյ  
 մի վրայ գրելէն՝ կ'անցնի Եգիպտոսի եկա-  
 մտից կամ Նեղոս գետոյն ստորագրութեան,  
 կամ նշանաւոր անձի մի վարուց. շատ հեղ  
 այլ կրկնէ առաջուան ըսածը, կամ մէկ  
 մասն առաջ պատմէ, միւսը շատ ետեւ: Այլ  
 ինչ և է, շատ հետաքննական և հարուստ  
 գիտելիք ունի՝ Ղփտեաց ճգնաւորաց, վա-  
 նորէից, եկեղեցեաց, պատրիարքաց, նա  
 և մասամբ Նուրիոյ և Եթովպիոյ վրայ,  
 ուր և թուի անձամբ գնացած և տեսած.  
 աւելի առաջ այլ անցնելով՝ Ափրիկէի հիւ-

սիսային կողմանց և Արարիոյ, և ինչուան ի Հնդկաստան կ'ականարկէ: Երբեմն եւս քաղաքական դիպուածոց վրայօք, որոց ներկայ եղած է, ինչպէս Սալահէտտինի Եգիպտոսի տիրելուն և աւրածներուն. երկայն գրուած մ'այլ Մարկոս Ալ-Քանպար անուամբ դիտի քահանայի և կրօնաւորի վրայ, որ իբրեւ քաղկեդոնական՝ հաճոյ չէ իրեն, և այլանդակ մոլորութիւններ այլ ընծայէ անոր:

Արուսահլ հնագոյն տեղեկութիւններն առած է իրմէ առաջ գրողներէն, որոց մէջ ամենէն անուանի և գտնելը փափագելին է՝ Աբուլ-Հասան Շարուշի անուամբ մէկն (*Ash-Shabushti*, شابسشي), ժ դարու վերջ կամ ի սկիզբն ժԱ ին մեռած. որ գրեր է Վանսրէից անուամբ գիրք մի (Քիրսապ ալ-Տիսրսար): Շատ բան այլ առած է թ. դարու հեղինակ Սեւրոս եպիսկոպոսի գրած Աղեքսանդրիոյ կամ Յակոբկաց պատրիարքաց պատմութենէն, ուսկից նոր հեղինակը այլ շատ օգտուած են, բայց ամբողջ գործն դեռ չէ թարգմանուած յեւրոպական լեզուս: Ուրիշ աղբիւր մ'այլ է Եւտիքիոս անուանեալ՝ բայց բնիկ անուամբ Սայիտիպն էլ-Պատրիկ պատրիարքն Մելքիդաց, յամի 940: Այսոր գրածն թարգմանուած է լատինարէն և տպագրուած յՕքս-

Քըրտ, յամի 1654-6: Դարձեալ նոյնպէս  
եկեղեցական պատմիչ մի՝ Մահպուպ, Յա-  
կոբիկ եպիսկոպոս Մըմբեճացի:

ԱՐՈՒՍԱԿԸ ի պատմութեան՝ Մարտիրո-  
սաց կոչուած թուականը գործածէ, որ կը  
սկսի Դիոկլետիանոսի հալածանաց հրո-  
վարտակէն, ի 29 օգոստոսի 284 փրկչա-  
կան տարւոյ. երբեմն այլ հիճրէղի թուա-  
կանը յիշէ: Հմուտ է մահամէտական օրինաց  
և պատմութեանց, և ոչ շատ իորշող. եր-  
կար գրելով և իրր բուն նպատակ՝ Ղփտեաց  
եկեղեցիքն և վանորայքը՝ աւելի յարեալ  
կ'երեւի այս ազգի, իրր համակրօն, և  
անոնց մէջ ծնած և սնած. թէ և հաւա-  
նօրէն՝ քանի մի դարէ ի վեր յԵզրիպտոս  
գաղթած Հայոց սերունդ է. թուի թէ և  
մեր նոր գաղթականաց նման՝ բնիկ հայ-  
րենի լեզուին անգէտ կամ ոչ շատգէտ,  
արարերէն գրեր է, իրրեւ գիտնական լե-  
զուաւ, որոյ հմտութիւնն անտարակոյս է,  
նա և շատ պատմիչներ յիշելէն: Բաց ի  
սկզբան բաւական երկար Հայոց վրայօք  
գրածէն, այլ և այլ տեղ այլ յիշէ զնոյն  
Հայ պաշտօնեայս և վզրուկս, և ուր որ  
Հայոց եկեղեցի և վանք կայ (զորս մենք  
այլ թարգմանօրէն պիտի յիշեմք). բայց  
ամենեւին իր հայազգի ըլլալը կամ ազ-  
գասիրութիւն՝ չի ցուցներ. և ընդհանրա-

պէս ոչ միայն անկողմնասէր, այլ և ցուրտ կ'երեւի, թէ և հաւատարիմ ի պատմութեան:

Այս մեր յառաջարանս մասամբ առած եմք թարգմանչին եօթ կամ ութ թուղթ յառաջարանութենէն, (որուն հաւատարմութեանը կամ արարագիտութեան չափին չեմք կրնար երաշխաւոր ըլլալ). մասամբ ամբողջ Արուսահլի գրոց թարգմանութիւնը կարդալով. ուսկից և պիտի քաղեմք այն կտորները միայն՝ որ վերաբերին Հայոց, և թարգմանութեան ներքեւ կ'աւելցնեմք երբեմն թարգմանչին և իր օգնականաց տուած ծանօթութիւնները, երբեմն մեր կողմանէ ինչ որ հարկաւոր համարեմք: Յիշեմք և զայս, որ թարգմանիչն խնամով երեք չորս ցանկ շինած և դրած է ի վերջ թարգմանութեանն, յատուկ անուանց տեղեաց և անձանց, և ընդհանուր անուանց, որ փափագելի էր մեզ աւելի ճոխ ըլլալ. ասոնցմէ զատ և առաջին ցանկ մ'այլ ըրած՝ և համրած է՝ եզրպտական եկեղեցեաց, թուով 707, և վանորէից՝ 181. բայց ասոնց վրայ կրնար քանի մ'այլ աւելցնել<sup>1</sup>: Յիշեմք դարձեալ, որ յետ պատ-

1. Նուրիոյ մէջ այլ 400 եկեղեցիք կային, կ'ըսէ Արուսահլ. Թ.Չ. դարու համըորդ մի՝ տեսողի վկայութեամբ դրած է, թէ 150 եկեղեցի կային դեռ վայելուչք բայց աւերակք:

մագրութեան Արուսահլի՝ կայ Յաւելուած՝  
 թարգմանուած Ա<sub>1</sub> - Մաքրիզի պատմչին  
 (+1441) գրած Եգիպտոսի քրիստոնէից  
 եկեղեցեաց, 72 տեղեաց, և 86 վանորէից  
 համառօտ ստորագրութիւն՝:

Յետ զասոնք յիշելու՝ չեմք կրնար չյի-  
 շել խոր զգացմամբ՝ մեր նախնեաց յիշած  
 և յանուանէ նշանակած, եօթանասունէն  
 աւելի Հայոց վանքերը յԵրուսաղէմ և ի  
 մերձաւոր տեղիս, զատ յեգիպտականաց,  
 Լուսաւորչի օրերէն մինչեւ ի վերջ Ձ դա-  
 րու՝ շինուած, բնակուած, նորոգուած և  
 աւրուած: Միթէ զուտ ազգային հեղինակ  
 մ'այլ՝ Արուսահլի և Շարուշթի նման չէ՞ր  
 գրած չափաւորապէս (և աւելի քան զԱ-  
 նաստաս վարդապետ մեր յ'է՛ դարու<sup>2</sup>)  
 ասոնց պատմութիւնը. կամ պիտի ըլլայ  
 մէկ մի՞ որ հետաքննէ անոնց անհետացեալ  
 տեղուանքը, և յերեւան հանէ անակնկալ  
 և ոչ իսպառ անյուսալի նշխարքը, ար-  
 ձանագրերն, և այլ ի՞նչ գիտեմ:

1. Միանգամայն թարգմանութիւն գրոց Արուսահլի  
 ծանօթութեամբ. ք. Յաւելուածով, ցանկերով և յառաջա-  
 քանութեամբ 400էն քիչ մ'այլ աւելի երես է, քառա-  
 ծալ թերթերով, արաբերէն բնագիրն այլ 142 երես:

2. Բազմավէպ, Հատ. 10, էջ 23:

## Բ.

Յառաջարանի մէջ յիշուեցաւ այս պատմութեան ձեռագրին սկզբան պակասութիւնը. հիմակուան եղածին առաջին երեսն այլ քիչ մի մաշած և դժուար կարդալի է. ասկէց թուի սխալ թուական կամ քանի մի բառ պակաս, որով շփոթի ըսածն. որ է այսպէս:

« Սկսինք օգնութեամբ և առաջնորդութեամբ Աստուծոյ: Մեր ժամանակիս, այսինքն ի սկզբան 564 տարւոյ (հիճր. որ է հոկտ. 1168—1169 սեպտ. թուին Քրիստոսի), եղաւ վերաշինութիւն Ս. Յակովբ կոչուած եկեղեցւոյն (Հայոց), որ Եզրիպտոսի Այգեստան կոչուած վիճակին մէջն է, բլրոց մօտ »:

Բնագիրն՝ Ալ-Պասադին البساتين յօգնակի գրէ՝ ուրիշ տեղ Ալ-Պուսդան ըսածը, որ է այգի, պարտէզ, պահէզ, և Գահիրէ մայրաքաղաքէն քանի մի մղոն միայն հեռու է՝ յարեւելեան հարաւային կողմն: Տեղն ստոյգ, ըսած թուականն կամ վերաշինու-

թիւնն սխալ. վասն զի ի յիշեալ թուականին՝ վանքն ոչ թէ շինուեցաւ՝ այլ աւրուեցաւ կամ ամայացաւ, ինչպէս քիչ մի վերջը պիտի ըսէ ինքն պատմիչն. ապա թուի թէ այս տեղ աւրուիլը յիշելով մէկ բառիւ՝ առաջին շինութիւնն այլ ուզեր էր յիշել, և երկու դիպուածն յիրար խառնուեր է:

« Այս եղաւ... Էմիրին ատեն, որ կա-  
 » ռավարէր զԵգիպտոս, շնորհիւ սուլտա-  
 » նին, և բարեկամ էր ամէն քրիստոնէից,  
 » թէ մեծամեծաց թէ ռամկաց »:

Անուն էմիրին պակսի ի ձեռագրին, բայց յետոյ յիշածէն յայտնուի, որ Մուս-դանգիր խալիֆէի՝ հայազգի վզրուկն էր, Պատր ալ-Ճամայի կոչուած, և շատ անգամ Էմիր ալ-Ճիւշի՝ بدر امير الجيوش, այսինքն՝ զօրապետ. յիշուի նա և ուրիշ պատուոյ անուամբք: Սա իրր դար մի յառաջ քան զվերոյիշեալ թուականն, այսինքն ժԱ դարու վերջին քառորդին, Հայոց նոր գաղթական բերելով՝ բազմացուց յԵգիպտոս զհամազգիս՝ իրրեւ 30,000 տուն. գոնէ 10,000, ինչպէս գրէ Ն. Շնորհալուոյ հմուտ կենսագիրն. ասոնց յատուկ եպիսկոպոս այլ ձեռնադրեց մեծ կաթողիկոսն Գրիգոր վկայասէր, անձամբ գալով յԵ-

զիպտոս, ինչպէս պիտի վկայէ և մեր պատմիչն: Պատրի ինչ ցեղէ ըլլալն յայտնի չէ. միայն կ'ըսուի՝ թէ Ասորոց երկրէն եկած էր կամ բերուած իբր գերի:

« Ինքն (էմիրն) ամսական տասն դենար  
 » (ոսկի դահեկան) կ'առնուր վարձ երկրի  
 » (վանացն Հայոց), որ իր կալուածն էր:  
 » Չեոք զարկաւ և յառաջ տարաւ զվե-  
 » րաշինութիւն Ս. Յակովբայ սրբարանին  
 » (արար. اسكيتا ասքիևա, ի յոյն ἄσκηγη  
 » բառէ). բարձր գմբեթով՝ որ շատ հեռուէն  
 » կ'երեւէր, կամարօք և կամարակապօք.  
 » և աւարտեց բոլորը, նորէն հաստատե-  
 » լով մեծամեծ դռները. ասոնք ատեն մի  
 » վերցուեցան, բայց ինքն նորէն նորոգեց.  
 » դարձեալ վերուցին այդ դռները, ինքն  
 » այլ դարձեալ հաստատեց »: Հաւանօ-  
 ըէն՝ քրիստոնէից և մանաւանդ Հայոց՝ այն  
 ատենի և տեղոյ յառաջադիմութեան նա-  
 խանձոտք և հակառակողը կ'ընէին զայս:

Այս դիպուածոց մանրամասնութենէն  
 աւելի՝ փափագելի էր մեզ գիտնալ, թէ  
 ե՞րբ առաջին անգամ շինուեր կամ հիմ-  
 նուեր էր՝ այդ Երուսաղեմի զուգորդ Հա-  
 յոց եզիպտական Ս. Յակովբն. որովհետեւ  
 պատմիչն՝ վերաշինութիւն կամ նորոգու-  
 թիւն կոչէ էմիրին ըրածը. որոյ գործակից

եղած է և Գրիգոր մեծ վկայասէրն. ինչ-  
 պէս վկայէ և պատմիչն վարդան, թէ երբ  
 եկաւ «ի Մար, և մեծարեցաւ յոյժ ի սու-  
 » տանէն, և շինեաց վանս Հայոց, և ձեռ-  
 » նադրեաց զեղբօրորդի իւր Գրիգորէս՝  
 » եպիսկոպոս ». սա ըստ այլոց և ստու-  
 գիւ՝ քնոորդի իւր էր: Վկայասիրի առա-  
 ջին անգամ յԵգիպտոս գալուն թուականն  
 հասարակօրէն համարուի 1076. թէ և ըստ  
 վարդանայ թերեւս աւելի կանուխ. զի  
 հազիւ տարի մի նստած յաթոնն (1065-6)  
 » գնաց, կ'ըսէ, ի Կ. պոլիս, ի թարգ-  
 » մանութիւն. և առեալ զգրեանն՝ կամե-  
 » ցաւ գնալ յԵրուսաղէմ. և նաւին առեալ  
 » գնա (վարելով հողմոյն) տանի ի Մար»:   
 վանաց շինութեանն անտարակոյս ձեռն-  
 տու եղած է Պատր, որոյ արդէն յամի  
 1074 վզրուկ ըլլալն յիշուի: Սա բաց այդ  
 մեծ Ս. Յակովբ եկեղեցիէն,

« Աւարտեց զնորոգութիւն ( ուրիշ մօ-  
 » տիկ) եկեղեցւոյ մի, բայց օծել չտուաւ,  
 » և ոչ պաշտօն կատարել հօն: Երբ վախ-  
 » ճանեցաւ ինքն՝ թաղուեցաւ այս եկե-  
 » ղեցւոյ մէջ: Հիմայ այս վանացս չորս  
 » կողմն են պարտէզք, բանջարանոցք և  
 » արտորայք ցորենոյ. զբօսանքի տեղեաց  
 » ամենէն նշանաւորներէն մէկն է: — Երբոր  
 » Ղուզք (ցեղակիցք թուրքաց) և Քուրդք

» տիրեցին Եզրիպտոսի երկրին հիճր. 564  
 » (1168 - 9 Փրկչին), ամհնուն ծանօթ  
 » տազնապք եկան այն ատեն յԵզրիպտոս  
 » բնակող Հայոց վրայ, իրենց պատրիարքն  
 » և կրօնաւորք՝ մեր յիշեալ վանքէն վորն-  
 » տուեցան, դռներն պատեցան գոցուե-  
 » ցան, և ոչ ոք համարձակէր մօտենալու  
 » ամայացեալ եկեղեցիներուն » :

Եզրիպտոսի տիրողն էր հոչակաւոր Սա-  
 լահէտտինն՝ Հալպայ և Դամասկոսի Կու-  
 րէտտին սուլտանին հրամանաւ. և զի ազ-  
 գաւ Քուրդ էր նա, Արուսահլ անոր զօր-  
 քերն այլ Քուրդ կոչէ, որոց զինակից էին  
 և Դուզք կամ Դօզք: Իսկ թուականն՝ որ  
 ստոյգ է և նոյն իր պատմութեան սկզբան  
 յիշածին հետ, յայտնէ մեր վերը ըսած  
 շփոթութիւնը՝ եկեղեցւոյ շինութեանն և  
 ամայութեան:

Այս ատենի Հայոց եպիսկոպոսին՝ զոր  
 նա պատրիարք կոչէ, յայտնի չէ անունն.  
 անկէ առաջ մեզ ծանօթ եպիսկոպոսն է  
 Անանիա, 30 տարի մ'առաջ վախճանած:

« Այգեաստանն ի կալուած տրուեցաւ  
 » Ֆաքի ալ—Պահա Ալի անուն զամասկաց-  
 » ւոյ (զիտնական անձ մի), սա Հայոց  
 » համար շնորհեց Յովհ. Մկրտչի եկեղե-  
 » ցին, որ շինուած էր ամբիժ Տիրամօր

» եկեղեցւոյն վրայ, ի Հարա - Զաւիւա  
 » (Թաղի). հօն բնակեցաւ պատրիարքն՝  
 » նոյն տարին» (1168-9):

Յիշեալ թաղն՝ որ հիմայ Զուվայիւա  
 կ'ըսուի, կոչուած է յանուն Բարբարոս  
 (Պէրպէր) ցեղի կամ գնդի, որ շիներ էր  
 զայն, Գահիրէ մայրաքաղաքի շինութեան  
 ատեն, իբր յամի 969. ինչուան հիմայ  
 կայ այն տեղ յայտնի հնութեան նշաննե-  
 րով եկեղեցի մի յանուն Ս. Կուսին (Ալ-  
 Ատհրա), և հաւանօրէն նոյն պատմչին  
 յիշածն է: Իսկ վրայէ վրայ շինուած եկե-  
 ղեցիք շատ յիշուին և կան յԵգիպտոս:

Որչափ այլ Հայք Եգիպտոսի տէրու-  
 թեան փոփոխութեան ատեն վնասուեցան  
 և քշուեցան, բոլորովին այլ անգործ և  
 ապշած չեն կեցած. Գուստատայ (Հին  
 Գահիրէի) մէջ Տիրամօր նուիրեալ եկեղեցի  
 մի կար, շատ յաճախեալ ի բարեպաշտից.  
 այդ քաղաքական շփոթից ատեն՝ եգիպ-  
 տական զօրաց մէկ բաժինն՝ ճիւլիւշիէ կո-  
 չուած՝ որ Խափշիկ էր ազգաւ և հակառակ  
 միւս (Ռայհանիէ) բաժնին, կողոպտեց այս  
 եկեղեցին, և ինչուան ճամբաներու վրայ  
 այլ աւազակութիւն և մարդասպանութիւն  
 կ'ընէր, ինչպէս պատմէ Աբուսահլ, և ա-  
 ւելցնէ.

« Երբ Ղուզք և Քուրդք տիրեցին Եգիպ-

» տոսի (1169ին), գունդ մի քրիստոնեայ  
 » Հայոց՝ վրայ հասան այս Սեւերուն, և  
 » շատերը սպաննելով՝ մնացեալները վորն-  
 » տեցին. և անոնց բնակած թաղն որ մօտ  
 » էր Աւ-Համրայ (թաղի) անբնակ մնալով՝  
 » Հատալպա Ղուզի մականուանեալ Գա-  
 » հիրէի վալին գնեց, և մշակութեան եր-  
 » կիր դարձուց տեղը», և այլն:

Յատուկ Հայոց զօրագունդ մ'ըլլալն ի  
 բանակի իաւրիֆայիցն Եգիպտոսի, յիշեն  
 ուրիշ պատմիչք այլ, նա և իրենց բնա-  
 կութեան թաղը, Հիւսէյինիէ կոչուած:

## Գ.

« ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԻՔՆ. — Այս պատ-  
 » րիարքս նախ եպիսկոպոս էր Իթֆիհի (որ  
 » հիմայ Աթֆիհ, اطفیح կոչուի, և փոքր քա-  
 » ղաք մ'է ի հարաւակողմն Գահիրէի, իբր  
 » 2800 բնակչօք). յետոյ Աւ-Հաֆիզի խա-  
 » լիֆայութեան ատեն՝ (1130-49) մտա-  
 » ծեց պատրիարք ըլլալ, կաշառք տալով:  
 » Գաշինք զրաւ ամիրապետին հետ, անոր  
 » պատմական գիտութիւններ հաղորդելու:  
 » և սա՝ հաճելով՝ թոյլ տուաւ անոր՝ որ

» շաբաթն երկու անգամ՝ երկուշաբթի և  
 » հինգշաբթի, գայ ի պալատ, էմիրներու  
 » և պաշտօնէից հետ, նա և տօնական  
 » օրեր, զինքը բարեւելու, և նոր գտած  
 » տեղեկութիւնները տալու: Այս կերպով  
 » երբ պատրիարքն այցելութեան գար ի  
 » Զմրխտեայ պալատն, կու հաղորդէր ինչ  
 » որ գտեր էր ի կենսագրութիւնս, ի պատ-  
 » մութիւնս պատերազմաց, ի ժամանա-  
 » կագրութիւնս և ի տարէգիրս առաջին  
 » տիրապետաց. և այս կերպով զրուցա-  
 » կից կ'ըլլար Ալ-Հաֆիզի հետ, ինչուան  
 » ասոր մահը, որ հանդիպեցաւ երկրորդ  
 » ճումահա ամսոյն 544 տարւոյ » (հիճր.  
 որ է Փրկչին 1149):

Յիշեալ Զմրխտեայ պալատն (Գասը  
 ալ-զիւմրիւտ, قصر الزمر) ֆաթիմեան խալի-  
 ֆայից արքունական մեծ ապարանից մասն  
 էր, յարեւելեան կողմ Գահիրէի, քաղ-  
 քին Զմրուխտ կոչուած դըրան անուամբ:  
 Յիշելի է այս տեղ՝ որ նոյն տարիները  
 (1135-7) խալիֆային վզրուկն էր Պահ-  
 լաւունին վահրամ, որ յետոյ պիտի յի-  
 շուի:

« Վերոյիշեալ վանքէն դուրս՝ բայց ոչ  
 » հեռի, բրտարանէն (հողէ ամաններու  
 » գործարան) գատ փոքր եկեղեցի մի կար,

» Ալ—ամիր պի—Ահքամի՛լլահ խալիֆային  
 » ատեն շինուած (որ է նախորդ Հաֆըզի),  
 » ի պէտս Մելքիտաց, փոխանակ Հարա  
 » Չաւիլայի մէջ եղած եկեղեցւոյն, որ և  
 » աւրուած էր անոր ատեն, և Հաֆըզի  
 » ատեն ի մզկիթ փոխուեցաւ... Կամարնե-  
 » բու վրայ շինուած էր եկեղեցին. ներքեւն  
 » այլ մեռելոց համար գերեզմանատուն մի  
 » կար: Երբ Դօզը և Քուրդը Հայոց վրայ  
 » հարուած բերին, պատրիարքնին թողուց  
 » զՅփպտոս և ելաւ գնաց յԵրուսաղէմ.  
 » հետը տանելով 75 Սուրբ Գիրք, որոց մէջ  
 » կար և օրինակ մի չորից Աւետարանաց  
 » պէսպէս գոյներով և ոսկւով՝ պայծառա-  
 » զարդ պատկերօք հրաշագործութեանց  
 » Քրիստոսի, որ փառաւորեալ ըլլայ »:

Բանասիրաց ցանկալի և անակնկալ  
 մարմաջ մ'է այս ձեռագրացս յիշատակն,  
 ոչ այնքան թուովն՝ որքան անոնց ընտիր  
 և պատուական ըլլալովն, մանաւանդ այն  
 ընտրելագոյն Աւետարանն, որ թուի թէ և  
 հնագոյն էր: Այսպէս կարծելով և թարգ-  
 մանիչ գրոցս, համարի թէ յոյն կամ ասորի  
 ճարտարաց գործ ըլլան զարդերն. վասն  
 զի, կ'ըսէ, ժՊ դարէն առաջ Հայոց մէջ  
 այսպիսի մանրանկար չկար: Սակայն ժՔ  
 դարու վերջերն այլ ի Հայոց ոսկեզարդ և  
 գունագոյն նկարեալ Աւետարանք գտուին

հիմայ. (օրինակ մի ըլլայ Սիսուանի երես  
84 պատկերն, Ս. Ներսիսի Լամբրունեց-  
ւոյ Աւետարանին): Թարգմանիչն յիշէ Էջ-  
միածնի 989 թուին (Քրիստոսի) զբուսածը,  
որոյ պատկերք յիրաւի հնագոյն ասորի  
նկարք են. յիշէ նա և մեր Ս. Ղազա-  
րու վանաց աւետարան մի՝ բիւզանդական  
մանրանկարօք՝ ի վերջ Ժ դարու. ստուգիւ  
չունիմք մենք այդպիսի մի որոշ թուակա-  
նաւ, բայց հատ մի՝ ոչ շատ մանր և ոչ  
այլ խոշոր արուեստով՝ բայց նշանաւոր  
պատկերօք և քիչ ոսկւով, որ ըստ ոմանց  
ԺԱ դարու գործ է, և ըստ այլոց՝ հնա-  
գոյն: Մնայ մեր Երուսաղեմի հռչակաւոր  
Ս. Յակոբայ միաբանից՝ քննել թէ արդեօք  
դեռ գտուի՞ իրենց զբառան կամ գանձա-  
տան մէջ՝ Աբուսահլի յիշած Աւետարանն,  
որոյ ինքն ականատես եղած և հաւնած  
գուշակուի. և մեզ հաւանական թուի թէ  
Գր. Վկայասէր բերած էր զայն. վասն զի  
յիշուած է ի պատմչաց մերոց հետը ձե-  
ռագիրներ բերելն և թողուլն յԵզրիպոս:

» Պատրիարքին ճամբորդութիւնն սկսաւ  
» շաբաթ օր Հատուր ամսոյ 15ին (նո-  
» յեմբ). Մարտիրոսաց 888 թուին (1172  
» Քրիստոսի), որ համեմատի հիճր. 568  
» տարւոյ Ռապի էվվէլ ամսոյ 23ին: Կ'ը-

» սուրի, թէ Երուսաղեմէն դուրս վանք  
 » մի շինեց, եկեղեցի մ'այլ յանուն Ս.  
 » Սարգսի, سرکيس, որ է նոյն Ապու Սիրճա  
 » سرجه կոչուածն. և այս եկեղեցւոյս փո-  
 » խաղընց բոլոր սեղանոյ սպասքն և ոսկի  
 » դահեկանքն, կ'ըսուի այլ թէ 20 միան-  
 » ձունք կային այս վանաց մէջ »:

Կարծեմ այն Ս. Սարգիս եկեղեցին հի-  
 մայ անյայտ է, և յիշուած չէ մեր Երու-  
 սաղեմի Ս. տեղեաց ստորագրողներէն:

« Պատրիարքն իրեն փոխանորդ քա-  
 » հանայ մի թողուց ի Գահիրէ, անոր  
 » որդւոյն հետ, որ ժամասացութիւն և պա-  
 » տարագ կատարեն ըստ պատշաճ ժամա-  
 » նակի, Յովհ. Մկրտիչի եկեղեցւոյն մէջ,  
 » որ ի Հարա Զաւիլա՝ անարատ Տիրամօր  
 » մատրան (եկեղեցւոյ) վրայ շինուած է,  
 » ինչպէս առաջ ըսինք. այս եկեղեցւոյ մէջ  
 » ժողովէին ընկերութիւն մի Հայոց՝ արանց  
 » և կանանց: Իսկ ասոնց ունեցած վանքն  
 » եկեղեցիներով մէկտեղ՝ ամայի թողուե-  
 » ցան, և զոներն այլ փակուեցան: — Երբ  
 » լուր եղաւ որ պատրիարքն յԵրուսաղէմ  
 » եկաւ հասաւ անվտանգ, բոլոր քրիստո-  
 » նեայք ընդ առաջ գնացին իրեն ուրախու-  
 » թեամբ և խնդութեամբ, հանդերձ սաղ-  
 » մոսերգութեամբ, և առջեւէն խաչեր և  
 » վառած ջահեր տանելով և բուրվառներով

» խնկելով: — Ասկէ վերջը պատրիարքն  
 » հանգիստ ապրեցաւ քիչ մ'ատեն, և ապա  
 » հանգեալ ի շնորհս Աստուծոյ, որ գո-  
 » վեալ ըլլայ, Տուրի ամսոյ հինգին (որ  
 » համեմատի դեկտ. 27-յանու. 25), ի  
 » նոյն վերոյիշեալ տարին, և թաղուեցաւ  
 » ի վանս Ս. Յակովբայ Զերեղեան յԵ-  
 » րուսաղէմ: — Սա ազնուարարոյ անձ  
 » մի էր, գեղեցիկ տեսքով, վայելուչ հա-  
 » սակաւ. երեսըն մօրուօք և մուղոք պա-  
 » տած, որ ալեւորած էին, և տարւօքն  
 » այլ իրրեւ ութսունամեայ էր »:

Այս նկարագիրս անտարակոյս յայտնէ՝  
 որ Արուսահլ անձամբ տեսեր և ճանչցեր է  
 իր պատրիարք կոչածը. ափսոս, որ անունը  
 չէ գրած, կամ թէ կամաւ լռած է, ինչ-  
 պէս և անոր ժամանակակից և ազգակից  
 Երուսաղէմի եպիսկոպոսին անունը, որոց  
 վրայ ըսուած պժգալի գրպարտութիւններ  
 յիշէ, վկայելով այլ որ նախանձոտաց չա-  
 րախօսութիւն ըլլան և անստոյգ:

« Կ'ըսուի, թէ յԵրուսաղէմ նստող Հայ  
 » եպիսկոպոսն՝ տեսնելով որ ամենքն կ'եր-  
 » թան տեսնուելու այս սուրբ պատրիար-  
 » քին հետ, իր ազնուական բարուց հա-  
 » մար, նախանձելով վրան՝ թոյն խմցուց,  
 » և մահը պատճառեց: Բայց Աստուած

» յաջողութիւն չտուաւ այդ եպիսկոպոս-  
 » սին՝ պատրիարքին մեռնելէն վերջը, և ոչ  
 » երջանիկ կեանք. վասն զի քսան օրէն  
 » ետեւ ինքն այլ մեռաւ: Աստուած իր  
 » ծածուկ իմաստութեամբ գիտէ՝ թէ որ-  
 » չափ ստոյգ էր այդ եպիսկոպոսին համար  
 » ըսուածն: Իսկ պատրիարքն՝ որոյ հա-  
 » մար էր խօսքերն իս, գիտուն քահանայ  
 » մ'էր, լաւ տեղեակ Ս. Գրոց և զանոնք  
 » յաջող բացատրող: Բայց կային նախան-  
 » ձոտք իր բարի համբաւոյն տարածմանն  
 » համար, և կ'ըսէին թէ յանցաւոր եղած  
 » էր ոչ բարոյական վարքով: Այս զրոյցս  
 » հանեցին իրեն անմեղութեան ամենէն  
 » աւելի նախանձոտքն: Գրոցս հեղինակն  
 » (ինքն Աբուսահլ) վկայէ, թէ հանդիպե-  
 » ցաւ Ասկալոնացի Ապու'լ Գասիմ խալիլ  
 » փիլիսոփայ բժշկի, որ կ'ըսէր՝ թէ տե-  
 » սեր էր զպատրիարքը՝ Ազ-Չուհրի վան-  
 » քում եղած ատեն, իր խըցկան մէջ (և  
 » անարատ գտեր է): Այս զրոյցս իր յԱ-  
 » սորիս (Եգիպտոսէ յԵրուսաղէմ) երթալէն  
 » և իր մահուանէն վերջը տարածուեցաւ:  
 » Մտրայ դատիներուն զլիսաւորին (որ էր  
 » Ալ-Ազզ Հասան իպն Սալամա՝ Պախի-  
 » լանի մականունանելոյ) տանը մէջ՝ ես  
 » այս զրոց խեղճ հեղինակս՝ հանդիպեցայ  
 » (վերոյիշեալ) Ապու'լ Գասիմի, Շավվալ

» ամսոյ 27ին, յամին 568 » . (հիճր. իսկ Գրիստոսի 1173) :

Այնքան այլանդակ են գրոյցքն, որ և ոչ թարգմանել արժան համարուած են. և գրեթէ նախանձու կիրքն՝ ինք զինքը յայտնէ, փոխանակ ուրիշներու ըրածին : Հրէշ պիտի ըլլար եպիսկոպոսն՝ որ 80ամեայ ձեր պատրիարքի մի թոյն տայ, որոյ համբաւն, գիտութիւն, կրօնասիրութիւնն՝ իրեն իսկական ջատագով են : Բայց Աստուծոյ գիտութեան թողլով՝ Աբուսահլի հետ՝ եթէ դատելու բարոյական բան մ'այլ կար, պատմականը կըրնանք խնդրել, այլ գուցէ և չգտնել. այսինքն, այդ եպիսկոպոսին ո՞վ ըլլալը և անունը : Յառաջ քան Երուսաղեմի պատրիարքներն, այսինքն ԺԳ դարէն յառաջ եղած եպիսկոպոսաց կարգն և անուանքն՝ շատ ստոյգ չեն, թէ և մօտատեններս՝ Ս. Յակովբայ հռչակաւոր աթոռոյն յաջորդներուն վրայ գրողք՝ շարակարգ մի հրատարակած են. ըստ որոց՝ վերոյիշեալ դիպաց տարին, 1172-3, Սահակ էր եպիսկոպոսն, այն որ Հռոմկլայի ազգային եկեղեցական մեծ ժողովոյն մէջ կու ստորագրէ, « Սահակ արքեպիսկոպոս աստուածակոխ քաղաքին Երուսաղեմի » . և կ'ըսեն, թէ սա աթոռակալեր է 1152 թուականէն մինչեւ ի 1180 : Բայց ժողովոց

պատմութիւնն և ժամանակակից Արուսահլի  
 պատմածն՝ անտարակոյս կ'ընէ, որ այս  
 Սահակս չէր այն տարուան (1173) եղած  
 և մեռած եպիսկոպոսն. անկէց առաջ՝ նոր  
 գաւազանագիրք կու դնեն Եսայի եպիսկո-  
 պոս, յամի 1152, եղբայր իր նախորդ  
 Ներսիսի, որ աթոռակալած ըլլայ յամի  
 1109, ուրեմն երկու եղբարք միանգամայն  
 45 տարի, որ շատ հաւանական չերեւ-  
 նար: Ինչպէս այլ ըլլայ այս, հարկ է որ  
 Եսայեայ և Սակահայ միջեւ, 1152-1171,  
 ուրիշ եպիսկոպոս այլ եղած ըլլայ, և ինքն  
 կամ իրեն անձանօթ յաջորդ մի ըլլայ  
 նախանձարեկ մեռնողն ի 1171: — Տե-  
 ղական խնդրին, այսինքն խալիլ Գասիմ  
 բժշկին եկած և պատրիարքին բնակած  
 Ազ-Չուհրի վանքն՝ զոր անմիջապէս այս  
 ղիպուածէն վերջը յատկապէս պիտի ստո-  
 րագրէ Արուսահլ, ծանօթ և անուանի էր.  
 ըստ թարգմանչացն՝ ընդ մէջ Գահիրէի և  
 Ֆուստատայ, ուր նախայիշեալ այգեստանն  
 կամ ընդարձակ պարտէզներն կային, ի-  
 րենց առջի ստացողին անուամբ կոչուած,  
 որ էր Աբդ ալ-Վահապ իպն Մուսա Ազ-  
 Չուհրի:

## Գ.

« ՀԱՅՈՑ՝ ԱՅԳԵՍՏԱՆԻ ԵՒ ԶՈՒՀՐԵԱՅ ՄԷՁ  
 » ԵՂԱԾ՝ ԵԿԵՂԵՑԵԱՑ՝ ՅԵՏՈՑ ԻՆՁ ԸԼԼԱԼՆ :  
 » — Երբ և ոչ մէկ զլիսաւոր Հայու մի թո-  
 » ղուցին մնալ յԵզրպտոս, Ղփտիք ստա-  
 » ցան այս ընդարձակ և հին եկեղեցին,  
 » մեր տիրոջ սուլտանի վճռով, և միջնոր-  
 » ղութեամբ Շէյխ ար-Ռայիս Սաֆի ատ-  
 » տաւլա իպն ապու՝ Մաալի դպրի (կամ  
 » զբազրի), որ և իպն Շարաֆի կոչուէր: Յե-  
 » տոյ Հայոց (համբարապետն կամ պաշտ-  
 » պանն) վահրամ Սայիտ ատ-տաւլա و عمر  
 » و آیدادو և նորոգեց այս իրաց յարմա-  
 » րութիւնը » :

Յիշեալ սուլտանն՝ կամ Նուրէտտինն է  
 կամ Սալահէտտին: Վահրամդ այդ իշ-  
 խանաւոր՝ չէր այն Շնորհալոյ հօրեղբօր  
 որդի և եղբայր Գրիգորի եպիսկոպոսի մեծ  
 իշխան վահրամն, որ յետոյ պիտի յիշուի  
 ի պատմչէս, և որ այս պատմածին թուա-  
 կանէն 40 կամ 50 տարի առաջ պայծա-  
 ռանար յԵզրպտոս. բայց զուցէ ասոնց ցե-  
 ղէն ըլլայ. իսկ ասոր գործն կամ պաշտօն՝

գոր Արուսահլ բւ՝ Հայոց կոչէ, և անզւ. թարգմանիչն steward of the Armenians գրէ, կարծեմ փակագծեկոցս մէկը նշանակէ, և որ և է կերպով՝ գործակալ մի էր Հայոց: Իր ըրած գործն այլ (որ քիչ մի մութ է) գրելէն ետեւ, պատմիչն յիշէ եկեղեցւոյն նորոգութիւնն Իպն-Շարաֆի ձեռք և Աղեքսանդրիոյ պատրիարքէն օժուելը, և անոր աթոռանիստ ըլլալը, ուր տեղ Հարաթ-ար-Ռում (հոովմէաբնակ) թաղի Ս. Աստուածածնի եկեղեցիէն քահանայք գային պաշտօնը կատարելու. յիշէ և եկեղեցւոյն պատկերաց նկարողները, որոց ամենուն գործն աւարտեր է յամին 1177:

« Այս ատեններս եկաւ ի Հայոց եպիսկոպոս մի, հետն այլ երեք քահանայ, Հայոց թագաւորէն և պատրիարքէն ղրկուած. երկուքէն այլ մէկ մէկ պատգամ, և երկու այլ թուղթ բերելով. որոց մէկը գրած էր Մէլիք Սալահատտին, միւսը՝ անոր եղբայրն Մէլիք Սայֆատտին Ապուպէքը, առ Մէլիք Թաքիատտին. որք պատուիրէին այսոր՝ իրենց թղթերովը, պատուով ընդունիլ զեպիսկոպոսը. և Հայոց երկու եկեղեցիները՝ որ յԱյգեատանն և ի Զուհրի՝ դարձնել տալ անոնց: Եպիսկոպոսն իջաւ յեկեղեցի Ս. Յովհաննու

» Մկրտչի՝ որ ի Հարա-Չաւիլա. բայց  
 » Ֆաքիհ՝ ատ-Թուսի չհաւանեցաւ այս  
 » բանիս. եպիսկոպոսն այլ հակառակելով  
 » անոր դէմ՝ ամիսներով կեցաւ հօն, մին-  
 » չեւ հիւանդանալով մեռաւ, առանց իր  
 » նպատակին հասնելու. թաղուեցաւ Հա-  
 » յոց Զուհրի եկեղեցւոյն մէջ. Աստուած  
 ողորմի հոգւոյն » :

Ֆաքիհ՝ դամասկացի մ'էր, Այգեստա-  
 նին կալուածատէր: Մեզի նշանակելին է  
 այդ անձանօթ մնացած դիպուածն, եպիս-  
 կոպոսի մի պատգամաւորութեան, ի քա-  
 ղաքական և եկեղեցական գլխոց Հայոց:  
 Յետինն յայտ է ի ժամանակէն՝ որ էր  
 ճարտար և փառաւոր կաթողիկոսն Գրի-  
 գոր Տղայ. առաջինը՝ թարգմանիչն կարծէ  
 թէ մեր մեծագործ Ա. Լեւոնն ըլլայ. այլ  
 չէ. հապա իր եղբայրն է, Պարոնաց Պա-  
 րոնն Ռուբէն, որ վախով զիջած էր առ  
 Սալահատտին, առ որ և Գր. Տղայոյ գրած  
 մէկ մտերմական թուղթն յիշուի, թէ և  
 ստուգութիւնն երկբայական է. իսկ Լեւոն  
 ինչպէս վարուեցաւ Սալահատտինի հետ,  
 ծանօթ է մեզ (ի Սիսուան), որոյ պատմա-  
 կան մասին փռանկերէն թարգմանութեան՝  
 խաւրէ անգլիացի թարգմանիչն՝ զընթեր-  
 ցողը. (բայց ոչ համաձայն հայ հեղի-  
 նակին): Սալահատտինի և Սայֆատտինի

Թուղթերն ընդունողն Թաքիատտին՝ էր  
 ետքինիս որդին, փոխարքայ զրուած յԵ-  
 գիպտոս՝ յամի 1183, ուսկի կանչուեցաւ  
 յԱսորիս յամի 1186. ուրեմն այս երկու  
 թուականաց միջոց եղաւ Հայոց եպիսկո-  
 պոսին գալն, որով՝ և մեր Ռուբենի իշ-  
 խանապետութեան ատեն, մինչ Լեւոն ոչ  
 թէ միայն չէր թագաւորած՝ այլ և ոչ  
 պայազատած:

Այս զիպուածէն քիչ վերջը, պատմէ Ա-  
 բուսահը՝ Ղփտեաց գողութեան կասկած  
 ունենալն՝ եկեղեցեաց պահապան մալիմա-  
 նաց վրայ, և զանոնք ձեծելը. ասոնց այլ  
 բողոքելն առ Փաքիհ, որ փակել կու տայ  
 զեկեղեցիս. յետոյ սուլտանն հրովարտա-  
 կաւ շնորհէ բանալ և պաշտօն կատարել:  
 Բայց Փաքիհի մեռնելէն ետեւ՝ նոր կա-  
 լուածատէրն, Պարսկաստանի Տուս (Tus)  
 քաղքէն եկած իմամ մի,

« Սկսաւ նեղել զքրիստոնեայս, և պար-  
 » զեւներ պահանջել կաշառի կերպով, ին-  
 » չուան ուր որ իր իշխանութիւնն հաս-  
 » նէր. յետոյ այն երկու եկեղեցիներն այլ  
 » փակել տուաւ, մեծին սպասները կողոպ-  
 » տելով, և զբան արգելք դնելով խոշոր  
 » գերան մի. ինչուան հիճր. 581 (Քրիս-  
 » տոսի 1185) տարւոյ Շապան ամսոյ  
 » 13ին, ուրբաթ օր: Այս ատեն Հայ մի

» եկաւ, որ կ'ըսէր թէ բարեկամ էր թաճ  
 » ատ-տաւլա (թագ պետութեան մակա-  
 » նուանեալ) վահրամայ Հայոյ, (Շնոր-  
 » հաււոյ հօրեղբօր) որ Աւ-իմամ Հաֆըզ  
 » (խաւիֆայի) վզուրկն էր. և կ'ըսէր, թէ  
 » այս վզըրկին ստակները թաղած էր մեծ  
 » եկեղեցւոյն մէջ, և հիմայ եկած էր զա-  
 » նոնք հանելու: Բայց իր ըսածին մտա-  
 » դրութիւն չըրին. սակայն ինքն, կ'ըսուի,  
 » թէ այնքան պնդեց իր երեւակայածը,  
 » որ եկեղեցին բացին իրեն, և սկսաւ տեղ  
 » տեղ փորել. յետոյ ըսաւ. Ստակն անե-  
 » ղեւոյթ եղեր է այս տեղէս. եկեղեցին  
 » կողոպտողներն առած են. և սկսաւ գան-  
 » գատիլ, թէ անիրաւութիւն մ'եղած է:  
 » Եկեղեցին իրեն համար բաց մնաց, և  
 » քանի որ այս երեւակայութեան մէջ էր,  
 » կեցաւ հօն. և երկրորդ կնիք մ'այլ դրաւ  
 » Մէլիք ալ-Մուզաֆֆարի (վերոյիշեալ  
 » թաքիատտին) դրածին վրայ: Բայց նոր  
 » նորոգութիւն մի չեղաւ հօն: Երբ թա-  
 » քիատտին յԱսորիս գնաց, հիճը. 582  
 » Շապան ամսուն (1186 Քր.) և եկաւ Աւ  
 » մէլիք ապու-Պէքըր (Սալահատտինի եղ-  
 » բայրն, իրրեւ ինամակալ անոր որդւոյն),  
 » հրամայեց՝ որ այդ երկու եկեղեցիները  
 » զատեն իրարմէ, նոյն տարին՝ Ռամա-  
 » զանի 10ին, և Ղփտիք և Հայք տիրա-

» ցան եկեղեցեաց և սկսան գործածել, յետ  
 » տարի մի և 15 օր գոց մնալու: Ղփտիք  
 » մեծ եկեղեցւոյն մէջ պաշտօն կատարէին,  
 » Քուհիաք (կամ Խոյաք ըստ Ղփտեաց)  
 » օրհնեալ ամսոյ առաջին օր (նոյեմ-  
 » դեկտ.), ամբիծ Մարտիրոսաց 903 թուին  
 » (1187 Քր.). և անկէ ետեւ Ղփտիք թող  
 » չտուին Հայոց՝ մեծ եկեղեցւոյն մէջ պաշ-  
 » տել: Այս բանիս համար ժողովք ըրին  
 » գլխաւոր անձինք. և երկու եկեղեցիքն  
 » այլ նորէն Հայոց ստացուած եղան »:

Որքան ատեն մնացին եկեղեցիքն ի ձեռս  
 Հայոց, ծանօթ չէ մեզ. գոնէ Սբուսահլի  
 ատեն իրենք էին տէր. իր գրոց Յաւելուած  
 և մեր յառաջաբանի մէջ յիշուած Մա-  
 քրիզի՝ երկար գրէ այս տեղւոյ յիշատա-  
 կին. և թէ, վերը յիշուած դիպուածնե-  
 րէն դար մի վերջը՝ Իպն Քալաուն Նասր  
 սուլտանին՝ ջրադարձներ և լճակ մի շինել  
 տուած ատեն՝ այդ եկեղեցեաց չորս կողմը,  
 ժողովուրդն ինքնօրէն աւրեր փլուցեր կո-  
 ղոպտեր է զանոնք և ուրիշ եկեղեցիներ  
 այլ: Իսկ մեր պատմիչն՝ վերջի ըսածէն  
 ետեւ, զանոնք այլ զՀայս այլ կու թողու, և  
 կ'անցնի ուրիշ և ուրիշներուն եկեղեցեաց  
 ստորագրութեան. զորս մենք այլ թողլով  
 իրենց, մերայոց վերաբերեալ տեղիքն և  
 մեծ պաշտօնեայքը յիշենք՝ իր ըսածնե-  
 րովը և ուրիշներու ծանօթութեամբք:

## Ե.

« ՏՈՒՐԱՅԻ, طرا, վանք և եկեղեցին. —  
 » Բրտի վանք بدر الفخار անուանեալ վանքն՝  
 » նուիրուած է Ս. Մերկիրիոսի. կ'ըսուի  
 » թէ և յանուն Ս. Թէոդորոսի այլ կո-  
 » չուած է: Կայ հօն և եկեղեցի մի յանուն  
 » փառաւորեալ Ս. Գէորգեայ, Տուրայի վի-  
 » ճակին մէջ, (Նեղոս) զետոյն (աջ) եզերքը,  
 » (Այգեստանէն հազիւ երկու մղոն հեռի,  
 » ի հարաւակողմն): Եկեղեցին փոքր էր  
 » քանի որ յակորիկ Ղփտեաց ձեռքն էր.  
 » Բայց երբ Գրիգոր պատրիարքն (կաթո-  
 » ղիկոսն) Հայոց եկաւ յԵգիպտոս, և Հայք  
 » (իրենց ազգակից վէզիր) Ամիր ալ-ճիւլիշ  
 » Պատրի չորս կողմ ժողովեցան, Յակոր-  
 » կաց Անպա (Հայր) Կիւրեղ պատրիարքի  
 » ատեն, և Տուրայի վիճակն տրուեցաւ  
 » Հայոց, ասոնք առին զեկեղեցին և փլու-  
 » ցին, և անոր տեղ մեծ ընդարձակ եկե-  
 » ղեցի մի շինեցին՝ շատ գմբեթներով, և  
 » կոչեցին յանուն Ս. Գէորգայ. վրան այլ  
 » աշտարակ մի կանգնեցին (իրը զանգա-  
 » կատուն), որոյ դուռն եկեղեցւոյն միջէն

» էր. եկեղեցւոյն չորս դին այլ պատ քաշե-  
 » ցին. այն շրջապատին մէջ կար աղբիւր  
 » մի և ջրաղացք մի եւս: Եկեղեցւոյն չորս  
 » կողմն այլ կար տեղ նարընջենի ծառոց  
 » և երկու տուփայրէ, قىچىچى, որ են պտղա-  
 » տու արմաւենիք, և ուրիշ ծառեր: Երբոր  
 » Հայոց վրայ փորձանքներն եկան, եկեղե-  
 » ցին նորէն դարձաւ Յակոբկաց, Անպա  
 » Մարկոսի պատրիարքութեան ատեն, որ  
 » առաջ կոչուէր Ապու՛լ Ֆարաճ Իպն Զա-  
 » րահ, և էր ԶԳ ի յաջորդութեան (պա-  
 » տրիարքաց Աղեքսանդրիոյ):... Ուրիշ  
 » գրուածի մի մէջ կ'ըսուի, թէ Ս. Գէոր-  
 » գայ վանքն ի ձեռք բերաւ Ապու Եասիր  
 » քահանայն, աւելի ճանչցուած Իպն ալ-  
 » Քուսղալ անուամբ, և հանդիսապէս թա-  
 » դուեցաւ յամին 559 (Քրիստոսի 1164) ի  
 » Բաուճա ամսոյն, ի պատրիարքութեան  
 » Անպա Յովհաննու, հաւանութեամբ Հա-  
 » յոց: Ապու Եասիր՝ եկեղեցւոյն վերնա-  
 » յարկին վրայ եկեղեցի մ'այլ շինեց յա-  
 » նուն Սուրբ Մինասայ, և ուրիշ մ'այլ  
 » յանուն մեծի Ս. Յովհաննու Մկրտչի և  
 » Գրիգորի. այս ետքի եկեղեցիս կենդրո-  
 » նական մեծ եկեղեցւոյն հարաւակողմն  
 » էր, Հայոց վանաց մէջ ի Տուրա, և  
 » օծուեցաւ ի 10 Բաուճա ամսոյ, յամի  
 » 902 իրաւափառ Մարտիրոսաց (1181

» Գրիստոսի), շինութեան ծախքը նախ  
 » վճարեց իպն Մաշքուր, ի ժամանակի  
 » օժմանն յԱպու Մանսուրէ, որ և էր վե-  
 » րակացու շինութեան պարսպաց Գահի-  
 » րէի և Մսրայ: Այս վանաց մէջ կայ  
 » աշտարակ մի, աղօրիք մի, և պարտէզ  
 » մի, որ Հայոց ստացուած էր, և երբ  
 » անոնցմէ ելաւ, Յակոբիւք ստացան, 600  
 » թուականէն ետեւ (Գրիստոսի 1204):  
 » Երբ Ապու Եասիր մեռաւ, վանքն եղաւ  
 » ստացուած իր աշակերտաց և Ղփտեաց,  
 » և այսպէս մնաց մինչեւ մեր ատեն »:

Այդ 1204 թուականէն ինչուան Արու-  
 սահլի գրութեան ատեն, ինչպէս յառա-  
 ջարանիս մէջ տեսանք, շատ տարի չէր  
 անցած. յետոյ Տուրայի վանաց և եկեղեց-  
 ւոյ ինչ ըլլալը՝ քննելի է Բըտլէրի գրոց  
 մէջ: Մենք մտարերել տանք՝ որ այդ տեղ-  
 ւոյ յիշեալ փոքր եկեղեցին՝ յանուն Ս.  
 Գրիգորի՝ անտարակոյս էր Լուսաւորչին  
 մերոյ, զի և վկայուի ի ձեռս Հայոց ըլ-  
 լալն: Երկրորդ մտարերելին է՝ մեծագոյն  
 եկեղեցւոյ շինութիւնն և վանաց պայծա-  
 ոութիւնն, շնորհիւ մեծագոր Հայ վրդրկին  
 (Պատր ալ-ճամալի կամ Ամիր ալ-ճիւլիւշ)  
 և մեծափայլ Գրիգոր վկայասէր կաթո-  
 դիկոսի: Տեղեացս մօտ լերանց գագաթում  
 Ալ-Քուսայիր վանաց Մելքիդաց եկեղեցի-

ները ստորագրելու ատեն՝ կու յիշէ Աբու-սահլ Գահիրէի պարիսպներու շինութիւնը Ալ-Մուսղանգիր խալիֆայի և Ամիր ալ-ճիւլիւշ Պատրի ատեն, այս տեղ ծանօթարարն յիշէ ըստ Մաքրիզեայ, որ նախ Ալ-Մուսղանգիր խալիֆայի ատեն շինուեցան պարիսպը Գահիրէի, յամի 969-70. բայց դար մի վերջը 1087, մեր Պատր վզուրկն՝ փլուց զանոնք և աւելի ընդարձակ շինեց, Յովհան կրօնաւորի մի վարպետութեամբ, որ Քուսայրի եկեղեցեաց մէկին մէջ թաղուած է: Գար մ'այլ վերջը՝ Սալահատտին նորոգեց և մէկ կողմէն ընդարձակեց, իսկ հիմակուան վիճակի մէջ՝ աւելի Պատրի շինութեան մնացորդք կ'երեւին քան ուրիշներուն:

Պատրի յիշատակ մ'այլ կ'ընէ Աբու-սահլ՝ Նուբիոյ տեղագրութեան մէջ. երբ յիշէ այդ երկրին Սողոմոն թագաւորը, որ քաղաքական հոգերը թողլով, Ս. Ոնոփրիոսի նուիրուած եկեղեցւոյ մէջ աղօթքով կ'անցընէր ժամանակը. երբ այս բանս իմացուցին Մուսղանգիր խալիֆայի,

« Ամիր ալ-ճիւլիւշ Պատր վզուրկ՝ մարդ  
 » խաւրեց և բերել տուաւ զնա ի Գահիրէ.  
 » և երբ հասաւ քաղքին դրան, մեծ հան-  
 » դիսիւ և պատուով և երաժշտաց գուն-  
 » դով մի ընդունուեցաւ. ընտիր հեծնելու

» ձի մ'այլ զրկուեցաւ իրեն. հրամանեց  
 » (վզուրկն) տէրութեան պատուաւոր ան-  
 » ձանց՝ որ աղէկ հոգան զնա. և յետոյ  
 » բնակեցուց վայելուչ տան մէջ, ճոխարար  
 » զարդարած մարմար քարամբք, քանդա-  
 » կագործ տախտակներով, գոյնագոյն և  
 » ոսկեթել հիւսուած դիպակներով: Տարի  
 » մի ապրեցաւ նա այս տեղ. և վզուրկն  
 » ստէպ կ'երթար զինքը տեսնելու, այլ-  
 » եւայլ իրաց վրայօք խօսելով հետը, և  
 » ուշ դնէր անոր ըսածներուն. և կու տես-  
 » նէր որ նա միայն փափագէր Աստուծոյ,  
 » — որում փառք և գովութիւն, — բոլոր  
 » սրտով և մտօք հրաժարելով ամեն մարդ-  
 » կային բազմանքներէ: Այսպէս տարի մի  
 » ապրելով թագաւորն՝ մեռաւ. և թաղուե-  
 » ցաւ ի վանս Ս. Գէորգայ յ'Ինանտար  
 » (յարուարձանս Գահիրէի) ի պատրիար-  
 » քութեան Կիւրղի ՆՁ պատրիարքի. գե-  
 » րեզմանն եկեղեցւոյ պարսպին մէջ է, մօտ  
 » ի դուռն եկեղեցւոյն, մտնողին աջակող-  
 » մը:.. Եւ կոչուեցաւ Սուրբ թագաւոր»:

Պատրի ստէպ երթալ տեսնուիլն և ու-  
 շադրութեամբ մտիկ ընելն այդ բարեպաշտ  
 թագաւորին խօսից, գուշակել տայ իր խղճի  
 տագնապը կամ երկմտութիւն մի. վասն  
 զի ինքն այլ երկմիտ և կէսկէս էր, կէս  
 քրիստոնեայ և կէս մալիման. և այնքան

քրիստոնէից պաշտպանելն և եկեղեցւոյ մէջ թաղուիլն (ինչպէս առաջ յիշեցինք), երեւցընէ, որ թէ արտաքուստ չէր, ներքուստ իր հայրենի կրօնքը չէր ուրացիր: Խորագէտ մարդ, զգաստ պաշտօնեայ, քաջ սպարապետ, փառաւոր իշխան և վզուրկ, նեցուկ պետութեան Եգիպտոսի, և զրեթէ վարիչ՝ 20 կամ աւելի տարի. բայց ոչ կատարեալ արիասիրտ. զի ոչ պարզահաւատ՝ առաջի մարդկան. զոնէ իր վերջի մտածութիւնն մեզի անյայտ, Աստուծոյ յայտնի: Իր մահն հանդիպեցաւ յամին 1094. աշխարհօրէն ոչ միայն մեծ փառօք և համբաւով, այլ և յարգանօք և սիրով. որով՝ իր յաղթութեանց առաջնորդուած զօրականք՝ մէկէն իրեն տեղ հռչակեցին և նստուցին վզուրկ իր որդին, Շահնշահ Ապու'լ Խասիմ, որ հասարակօրէն յԱրաբաց Ալ-Աֆտալ կամ Աֆսալ կոչուի, افضل شاهنشاه, և երեք խալիֆայից ատեն իբր 30 տարի վարեց իր մեծ իշխանութիւնը հօրը նման, նա և ըստ հաւատոց. բայց ոչ անոր պէս իսղաղ վախճան ունեցաւ, այլ սպանութեամբ, յամի 1122: Մաքրիզի և ուրիշ Արաբացի պատմիչք շատ անգամ յիշեն զնա. իսկ Արուսահլ ի ստորագրելն ըզվանքն թամվայիհ, որ ի հարաւակողման Տուրայի, կ'ըսէ.

« Ծահնշահ շատ հեղ կ'իջեվանէր այս  
 » վանքիս մէջ, և ատեն կ'անցընէր խառ-  
 » նափնդոր ու վայրապար. վանքին քով  
 » այլ պարտէզ մի յարդարեց, ամեն տե-  
 » սակ ծառ և արմաւենիներ տնկելով. աղ-  
 » բիւրներ այլ փազցուց, վրանին ջրադարձ  
 » անիւններով. թանձր ցանկով մ'այլ շրը-  
 » ջապատեց պարտէզը: Վանացս տարեկան  
 » հարկն առ գանձարան տէրութեան՝ 11  
 » դենար էր. յետոյ այս հարկս դադրեցաւ,  
 » և անոր ստակով ձիթահանք շինեցին  
 » վանաց պարսպին մէջ, ամենայն մա-  
 » սամբք կատարեալ: Վանքն 47 ֆետգակ  
 » (իբր 200 հազարչափ քառակուսի երկիր  
 » կալուած ունէր, զոր գրաւեցին Ղուզք և  
 » Քուրդք՝ Նասր Եուսուֆ (Սալահատտինի)  
 » թագաւորութեան ատեն: Այս վանացս  
 » մէջ հանգչէր մարմին (Ս.) Պափնուտիոսի,  
 » որ վանացս առաջնորդ եղած էր, և տօնն  
 » կատարուի ի 15 Ամշիր ամսոյ. պատկեր  
 » մ'այլ կար այս տեղ՝ Տիրամօր անարատ  
 » կուսին Մարիամու: — Ալ-Աֆտալ (Շա-  
 » հրնշահ) այն տեղ՝ շինուածքին վերնա-  
 » յարկին մէջ՝ նստած կու զուարճանար » :

Արուսահլ ուրիշ տեղ մի՝ Համրա թաղին  
 մէջ Ս. Անտիբրիոսի վանքը ստորագրելով,  
 կու յիշէ Ծահնշահի զրագիրը,

« Եէյիս Ապտու'լ Փատլ իպն Ուսքուֆ

» կոչուած, որ հանապազորդէր աղօթելու  
 » այս եկեղեցւոյս մէջ և հաղորդուելու. և  
 » յետ հաղորդութեան ամէն օր որ գար՝  
 » քահանային համար պնակին մէջ դնար  
 » մի կու ձգէր, անոր պաշտօնակատարու-  
 » թեան և անոյշ ձայնին հաւնելով: Այս  
 » քահանայն՝ Պահր ալ-Ճիզէ (ծովակին) մէջ  
 » խղղուեցաւ. Աստուած հանգիստ պարգեւէ  
 » հոգւոյն »:

Եզրիպտոսի ուրիշ արարագիր պատմիչք  
 աւելի երկար այլ պատմեն Աֆտալի մահը  
 և գործերը. որոց մէջ նշանաւոր է՝ Երու-  
 սաղեմի Ա Պալտին թագաւորին հետ կոռւիլ  
 և զինադուլ ընելն, յամի 1115: Իսկ իր  
 մահուան պատճառ էր իր մեծ և համար-  
 ձակ իշխանութիւնն. ուսկից վախնալով  
 Ամէր խալիֆայ, փորձեր է, կ'ըսեն թու-  
 նով մեռցընել. և չյաջողելով, այն ատեն-  
 ներ անուանի Սրիկայից կամ իշխանաս-  
 պան Աւազակաց ձեռօք՝ գաղտուկ սպաննել  
 տուեր է, կամուրջի մի մօտ նեղուց տեղ  
 մի. ուր որ յետոյ (1129—30) զինքն այլ  
 սպաններ են ընկերք նոյն աւազակաց,  
 գրգռուած Աֆտալի հօր և իր բարեկամնե-  
 րէն: Սորա սպանուելէն ետեւ՝ Ամէր բան-  
 տել տուեր էր անոր Ապուհայի Ահմետ որ-  
 դին, և գրաւեր ստացուածքը, որ զատ  
 տեսակ տեսակ նիւթերէ, զուտ ստակ

չորս միլիոն ոսկի ունէր: Ամէրի սպանողը՝ հանեցին զԱպուհալի ի բանդէ, և վզրուկ ու զօրապետ կարգեցին իր հօր և պապուն նման: Անոնցմէ աւելի իշխանասէր և յանդուգն երեւցած համարուի սա. իբր զի, Ամէր արու զաւակ չունէր, և ըստ իրենց օրինաց կանայք չէին թագաւորեր. և զի իր կինն յղի էր (իւր սպանուած ժամանակ), սպասէին Եգիպտացիք իրենց բաղդին, Ապուհալի այլ իրենին: Կինն ծնաւ աղջիկ. Ամէրի եղբայրն Հաֆըզ՝ իսկոյն յաջորդեց. և տեսնելով որ Ապուհալի բոլոր իշխանութիւնը և գրեթէ գահն ալ գրաւել կ'ուզէ, տարի մի չանցած՝ (1130-1) սպաննել տուաւ զնա: Անունէն յայտնի է որ սա այլ իր հօր պէս մալիման էր. և չափազանց իշխանասիրութեամբն՝ կենացը հետ իր հարց յիսնամեայ վզըրկութեան այլ վերջ տուաւ:

## 9.

Շահնշահի մահուանէն տասն տարի մի վերջը՝ ուրիշ Հայ վզուրկ միանգամայն և քաջ զօրավար մի փառօք փայլի յԵգիպտոս. Արուսահլի Զուհրայ վանաց ստորա-

գրութեան մէջ յիշուածն թա՛մ առ-տարա  
Պահրամ, تاج ادووله بهرام, ծանօթ ազնուական  
ցեղէ Պահլաւունեաց, ի մօրէ այլ Գրիգ.  
Մագիստրոսի թոռն, հօրեղբայր Ս. Ներսիսի  
Շնորհալուոյ և եղբայր Գրիգորիսի եպիս-  
կոպոսին Եգիպտոսի, Վահրամ. ասոնց հետ  
եկած էր նաեւ միւս եղբայրնին, Վասակ,  
զոր և Վասիլ և Եասալ ایصال կոչեն արա-  
բացի պատմիչք: Շնորհալի իր վիպասա-  
նութեան վերջ իր ցեղին ազգաբանութիւնն  
ընելով, յիշէ զայս երեք հօրեղբարքն այլ,  
նախ մեծ վկայասիրին համար ըսելով, թէ  
յեգիպտոս՝

« Անդ ի յաթուրն սուրբ եղեալ  
Զառ ի քեռէն որդի ծընեալ  
ԶԳրիգորիոս համանուանեալ...  
Որ Յովսեփայ մեծին նմանեալ՝  
Բզհամազգիս ըզկնի ձրգեալ,  
Զարի եղբարս իւր քաջացեալ,  
Բստ Յեսովայ զօրավարեալ.  
Որոյ Վահրամ վերածայնեալ,  
Միւսոյն Վասակ անուանաղբեալ:  
Որք վեհագոյն փառս ընկալեալ  
Եւ մեծարզի պատուոյ հասեալ.  
Բզպատերազմ ազանց վանեալ  
Հակառակաց յաղթող զըտեալ.  
Վասն այսորիկ շրքեղացեալ,  
Եւ աշխարհի նոցունց տիրեալ »:

Տիրելն շատ է, բայց ստուգիւ տեսակ մի տիրապետել և պայազատել էր կէս դար, Պատրի և Շահնշահի վզըրկութիւնն. վասն զի թոյլտուութեամբ կամ թուլութեամբ խալիֆայից, իրենք հոգային թէ քաղաքական թէ զինուորական գործերը, և թէ տնտեսականը, այսինքն տէրութեան գանձն կամ եկամուտն. որ Պատրի վերահոգութեամբ, և Աշ-Խահհալ մեծ դատիւ մի գործադրութեամբ՝ տարեկան երեք միլիոն դենարէն աւելի էր. իսկ Շահնշահ, կ'ըսէ Աքուսահլ, զխահարկը աւելցուց մինչեւ մէկ դենար և  $\frac{3}{4}$ : Ասոնց գործոց՝ թէ ոչ շատ տարի՝ այլ շատ մասամբ հետեւող և յաջորդ եղան Շնորհալոյ գոված հօրեղբարքն, մանաւանդ երիցագոյնն Վահրամ՝ թագ պետութեան մականուանեալն, հաւատարիմ ամիրապետին, հաւատարմագոյն Ամենապետին, հայրենի և պահլաւոնի ցեղին կրօնապահութեամբ, և առաւելեալ իսկ քան զխալիֆայից սզգակիցսն, ինչպէս քիչ մի յետոյ պիտի տեսնեմք: — Վահրամ՝ վզուրկ եղաւ Հաֆրզ խալիֆայի ատեն, որ թուլութեամբ չէր կարող կառավարել. և նախ իր որդին ապստամբեցաւ և սկսաւ զուրիշներն այլ գրգռել. զօրականք աղաչեցին և խալիֆայն հաւանեցաւ՝ որ Վահրամ յանձն առնու վէզիրութիւնը, փոխանակ ապստամբ որդ-

ւոյն: Վահրամ որ Պատրի հետ Եզրպտոս  
 եկած կ'ըսուի, և անոր օգնականն էր և յա-  
 ռաջադէմ ի զինուորական կարգի, զիջաւ  
 անոնց աղաչանաց, և իշխանութեան և  
 բանակին գլուխ կենալով, երբ մօտեցաւ  
 ի մայրաքաղաքն, ապստամբն (Ալ-Հաչէն)  
 թողուց փախաւ, և Վահրամ խաղաղցուց ու  
 բարեկարգեց աշխարհը: Բայց երբ երկու  
 տարի վերջը (1137), Ռիւտովան Վալախի  
 անուամբ մէկն՝ նորէն գրգռեց զթողովուր-  
 ղը, իրը թէ Վահրամ ամեն պաշտօն և  
 պատիւ Հայոց և քրիստոնէից կու տայ,  
 Հայոց հեծելազօրք և աղեղնաւորք ուզե-  
 ցին նորէն հալածել զապստամբները. բայց  
 Վահրամ՝ որ աւելի բարեպաշտ էր քան  
 փառապաշտ, համոզեց զանոնք որ թողուն  
 բնիկ երկրցոց իրենց հողը, և իրենք իրենց  
 ստացուածքն առնուն երթան ի Սայիտ  
 (հիմայ Սիւլիւս). ինքն այլ գնաց յ'այն  
 կողմն, ի Թեբայիդ, ուր դեռ հին ճգնա-  
 ւորաց հետեւող վանքեր և վանականներ  
 կային, և ուր իր եղբայրն Վասակ իշխան  
 էր: Ռիւտովան յաջողեցաւ յանկարծ վրայ  
 հասնիլ, բռնել ու սպաննել զՎասակ. ու-  
 զեց բռնել և զՎահրամ, (և ըստ ոմանց  
 բռնեց). բայց իմանալով որ նա քաշուած ի  
 վանս՝ ճգնաւորի կեանք կ'անցընէ, թողուց  
 ազատ, ու եկաւ մայրաքաղաքին մնացեալ

Հայերը հալածեց, և Ջուհրեայ վանքը աւրեց: Բայց ինքն այլ բռնուեցաւ և սպանուեցաւ: Խալիֆայն աղաչեց Վահրամայ՝ որ դառնայ իր վէզիրութեան աթոռը. սա յանձն չառաւ, այլ իրրեւ հիւր ատեն մի կեցաւ յարքունիս, և յետոյ ի վանորայս, մինչեւ ի մահն: Արուսահլ չի պատմեր այս բաները. միայն ի ստորագրութեան հռչակաւոր ճերմակ վանաց, *بیر القديس*, կամ Դփտեաց մեծ Ս. Շնուտի կամ Շանուտի, որ և Սանութիոս, կ'ըսէ.

« Վահրամ քրիստոնեայ Հայն՝ որ Ալ—  
 » Հաֆըզ Խալիֆայի ատեն վզուրկ եղած  
 » էր, և յետոյ կրօնաւոր, այս վանացս  
 » մէջ միանձնացաւ, իր պաշտօնէն մեր-  
 » ժուելէն ետեւ. վերջը թէպէտ և խիստ  
 » շատ տկար և հիւանդ էր, բայց փափա-  
 » գեցաւ երթալ ի Գահիրէ. ուր և տար-  
 » ուեցաւ, և դեռ ողջ հասաւ »:

Ուրիշ նշանաւոր վանքի մի, Ալ Բուսաիր կոչուած (*القصير*) ստորագրութեան մէջ՝ յիշէ Արուսահլ զեղբայրն Վահրամայ, որ երբ այդ դարէ ի վեր (1010ին) աւրջտկած և կոչոպտուած վանքին համար հրաման տրուեցաւ կրօնաւորաց՝ նորոգելու,

« Ալ—Եասալ (Վասակ) եղբայր թիած ատ—տաւլա Վահրամայ՝ սահմանեց այդ

» վանաց՝ իրրեւ փոխարէն վնասուն, 16  
 » ֆէտզան երկիր »:

Այդ իրր ուխտատեղի պատուեալ վանքն՝  
 Եգիպտոսի արեւելեան կողմի լեւանց վրայ  
 շինուած է, յանուն հռչակաւոր Ս. Աբսէն  
 ճգնաւորի, որ հօն թաղուած էր: — Յի-  
 շեալ տարածութեան չափն, մէկ ֆէտզան  
 կամ ֆէտտան, 4200 քառակուսի Չափ  
 (մետր) է:

Վահրամներէ և Վասակներէ շատ առաջ,  
 և նոյն իսկ Արարացոց Եգիպտոսի տիրե-  
 շուն ժամանակակից և գործակից՝ ծանօթ  
 և ուրացեալ հայազգի Վարդանն, որ առաջ  
 Յունաց կայսերաց զօրավար ըլլալով Հո-  
 ռամ կոչուի, وردان الرومى, յիշէ Աբուսահլ,  
 Արարաց գլխաւորին (Ամ իպն ալ-Ասի),  
 թէ բարեկամն էր, և Եգիպտոսի հարկապետ  
 եղաւ, բայց յետոյ սպանուեցաւ յԱղեք-  
 սանդրիս. սակայն ի հին Գահիրէ կոչուած  
 և հիմայ Ֆուսղադ քաղաքի՝ երկար ժա-  
 մանակ լսուէր իր անուամբ Շուկայն կամ  
 վաճառանոցն Սիրք Վարտան, سوق وردان.  
 որոյ մօտ ճեմելիքն այլ կոչուէր Ապու  
 Ֆարվայի գուկակ, زقة: (Այս ետքի անունս՝  
 որ վաճառատուն նշանակէ, քանի մի հեղ  
 յիշուած է յարձանագիրս Հայոց հռչա-  
 կեալ Անի քաղաքի): — Մեր համազգեաց  
 այսպիսի բարձր գահերով և մեծամեծ պաշ-

տամամբք հանդիսանալն յԵզրիպտոս յ'Է,  
 ԺԱ, ԺԲ դարս, թէ այն երկրին թէ մեր  
 երկրի պատմութեան մէջ նշանաւոր կէտ  
 մ'է. որոյ զուգակշռեն անշուշտ ընթեր-  
 ցողք՝ մեր դարուս և այս օրերուս նոյն  
 հին աշխարհին մէջ, մերձաւորապէս նման  
 պատիւ և պաշտօններ վարած և վարող  
 ճարտար ազգային փաշաներ և պէկեր,  
 Պօղ. Եռուսուֆեան, Արթին Չրաքեան և որ-  
 ղիքն՝ Եաքուպ և Եռուսուֆ, Նուպար, Պե-  
 տան, Հէքէքեան, Տիգրան Ապրոյ, և այլն:

## Է.

ԱՅԼԵԻԱՅԼ ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅՅԵԱՅ  
 ԵՒ ՎԱՆԱՅ ՅԵԳԻՊՏՈՍ. — Մինչեւ հիմայ  
 մեր փոխադրած պատմական Հայոց յիշա-  
 տակներէն զուրս, Արուսահլ ուրիշ երկար  
 կամ նշանաւոր բան մի չի գրեր մերայոց  
 վրայօք, բայց եթէ անոնց ունեցած քանի  
 մի եկեղեցեաց և վանաց, որ են հետեւ-  
 եալքն, ըստ կարգի կամ շարքի իր գրոց,  
 և ոչ ըստ դրից տեղեաց կամ աշխարհա-  
 գրութեան:

Եզրիպտոսի գերահռչակ բրգանց մօտերը՝

Տահշուր գեղի՝ Գրիգոր Ալ-Քայիսի եպիսկոպոսին շինած Ս. Աստուածածնի եկեղեցւոյն արուելին ի հակառակութեան Ռայիհանեանց և Ճիւլիւշեանց՝ յիշելէն ետեւ, Աբուսահլ՝ Նեղոսի արեւմտեան փէն կ'անցնի յարեւելս, կու հեռանայ մինչեւ մօտ յափունս կարմիր ծովու, և կու ստորագրէ շատ անուանի և ցանկալի տեղ մի, կրօնական և կրօնաւորական նկատմամբ. ամենահոչակ Ս. Անտոնի վանքն և յետին հանգստարանն, որ քաղաքականօրէն հիւսայ Իթֆիհ կամ Աթֆիհ վիճակին վերաբերի: Այդ անապատ տեղն ընտրեց, կ'ըսէ, « Անպա Անտունայն եզրպտացի, կամ Անտոնիոս, Աստղն անապատի և Հայր միանձանց, առաջին անապատակեաց: ... » Այս վիճակին Իթֆիհի եօթն եկեղեցիք « կան, վիցն Ղփտեաց, մէկն Հայոց, որ կոչուի յամուն Ս. Գէորգայ վկայի »: Շատ վայելուչ և գրեթէ անկարելի էր Հայոց՝ որք ամենայն արեւելեայց հետ մեծապէս պատուեն զհասարակաց պատուելի « Նախասկիզբն միանձանց », որում այս բառերով սկսուած արժանավայել շարական մի երգած են և երգեն ամէն տարի, — որ անոր վերջին ճգնութեան և ճգնակիր մարմնոյն հանգստարանին մօտ յատուկ վանք և եկեղեցի մ'ալ ունենային, որ թուի

Թէ և շէն էր Արուսահլի ժամանակ, զի կան կ'ըսէ և ոչ կային եկեղեցիքն:

ՄԷՅՏՏՈՒՄ կամ ՍԱՖԻ ՄԱՅՏՏՈՒՆ՝ ճիգէ զաւառի Զաւիէ վիճակի մէջ գեղ մի է, « ուր կայ եկեղեցի մի հասարակաց, երեք » սեղանովք. մէջտեղին՝ Ղփտեաց է, յա- » նուն քաջ նահատակին Թէոդորոսի, երկ- » րորդն՝ Հայոց է, յանուն փառաւորեալ » վկային Ս. Գեորգայ, երրորդն նուիրեալ » Տիրուհոյ Կուսին Մարիամու՝ Մելքի- » տաց է »:

ՖԱՅՈՒՄ. — Հին և անուանի քաղաք է համանուն վիճակի, և այսպէս կոչուի Ֆիում բառիւ Ղփտեաց, որ լին կամ ծով նշա- նակէ, քովի անուանի հին Մերիա լճին հա- մար, յորում շատ կոկորդիլոսք կային, այն պատճառաւ կոկորդիլոպոլիս անուանեցին, նա և Արսինոյէ: Յաշխարհահամարի 1885 տարւոյ՝ 26000 բնակիչ ունէր: Արուսահլ կ'ըսէ, Թէ Քիֆղ Մեստրեմի որդին, թոռն Քամայ՝ շիներ է այս քաղաքս, և Յովսէփ նահապետ նորոգեր է, և Նիւղոսաչափ մի հաստատեր է. յետ երկար ստորագրու- թեան՝ վերջացընէ այսպէս. « Մելքիտք այլ » եկեղեցի մի ունին՝ Հայոց րադիկ մէջ ». գուշակուի ուրեմն որ մերոնք այլ եկեղեցի մի ունէին, զոր չի յիշեր. և թէպէտ այս Ֆայումի վիճակին մէջ 25 վանք կային

կ'ըսէ, բայց հազիւ երկու կամ երեք եկեղեցի յիշէ, որոց մէկն յանուն Միքայէլ հրեշտակապետի, շատ մեծ և շատ գեղեցկաշէն:

**ՊԱՀՈՒՄԱԼԻՍ.** — Այս տեղս յայտնի չէ հիմայ, կ'ըսէ թարգմանիչն Աբուսահլի. իսկ սա յիշէ հօս քանի մի եկեղեցի, որոց մէկն յանուն Ս. Արմենիոսի, որոյ համար Մաքրիզի գրեւ է, թէ հնագոյն ճգնաւորաց մէկն է և շատ հռչակաւոր. Ղփտեաց Յայսմաուրք քանի մի համանուն՝ Հարմանուս, Հարմանս՝ Սուրբեր յիշեն. գուցէ հնագոյնն ազգաւ Հայ էր և մեր ազգի արեւմտեան անուամբն ճանչցուած և ոչ անձին բնիկ անուամբ: — Մաքրիզի այլ յիշէ Պու Հարմիկս վանքն Գաւ ալ-Խարապ կոչուած մեհենատեղւոյ մօտ, ուր շատ հին արձանագիրք կան. յիշեալն այլ անուանին սուրբ ճգնաւոր մ'է:

**ԱԼ-ԽՈՒՍՈՒՍ.** — Թէ և ոչ որոշակի, բայց յայտնի է ասոր զիրքն, Սիւլիւղ կամ Ասիուղ գաւառի և մեծ քաղաքին մօտ, որ հին ատեն Սայիտ կ'ըսուէր և ի Յունաց Լիւկոպոլիս, վերին Եգիպտոսի մայրաքաղաք, և հիմայ 30,000-էն աւելի բնակիչ ունի: « Ի Խուսուս, կ'ըսէ Աբուս » սահլ, Ղփտիք եկեղեցի ունին, Հայք՝ » վանք մի քաղքին մէջ և երկու եկեղեցի,

» քաղքէն դուրս այլ երկու եկեղեցի » : Այս յայտնէ թէ խուսուարի մեծութիւնն և թէ Հայոց բազմութիւնն այն տեղ, բայց պատմիչն չի յիշեր ասոնց եկեղեցեաց անունները, իսկ Ղփտեաց՝ թիչ շատ. և վկայէ որ այս Սիւլուղ գաւառին մէջ ասոնք հարիւրաւոր եկեղեցիներ ունէին :

ՇԻՆԱՐԱ. — Գեղ մ' է ի Միջին Եգիպտոս, Նեղոսի արեւմտեան եզերքում, Պաշն կոչուած աւանին այլ արեւմտակողմը. 2700 բնակիչ ունէր յամին 1885, Ղփտի և Պէտէվի : « Շինարա վիճակին մէջ, կ'ըսէ » Արուսահլ, Հայոց ըրիստոնէից գաղթա- » կան մի հաստատուած էր, որք եօթն » եկեղեցի ունէին, շատ բարեկարգ, քա- » հանաներով և միաբաններով. եկեղեցեաց » մէկն էր յանուն Տիրուհւոյ անարատ կու- » սին Մարիամու. մէկն յանուն փառա- » լորեալ Միքայէլ (հրեշտակապետի), միւս » երկու եկեղեցիք Ս. Մաքսիմոս (?), եր- » կու եկեղեցիք յանուն Գաբրիէլ հրեշ- » տակի, եկեղեցի մի Բաստիդար? بستیدر » կոչուած, եկեղեցի մ'այլ յանուն փա- » ռաւոր վկային Գէորգեայ » : Եօթն ըսաւ, ինն համրեց. հաւանօրէն յանուն Հրեշտա- կապետաց Գաբրիելի և Միքայելի մէկ մէկ եկեղեցի ըլլալու էր, որով թիւն հաւասարի. իսկ վերջընթերին անունն և իսկն անծանօթ է մեզ :

**ՔԱԼՈՒՍԱՆԱ.** — Ըստ Աբուսահլի այս տեղս Մարաղա կամ յոգնարար Մարաղաթ վիճակին մէջ էր, որ հիմակուան ձիրճէ վիճակի պատշաճի, և կար հօն եկեղեցի մի Ղփտեաց, եկեղեցի մ'այլ Հայոց:

Աբուսահլի յիշած այսքան Հայոց վանաց և եկեղեցիներէ զատ, Մաքրիզի յիշէ մերայոց աւերակ վանք մ'ալ մօտ ի վանորայս Ս. Յովհաննու Գրեցւոյն և Ս. Անուբրիոսի. որոց տեղիքն հաւանօրէն անձանօթ չեն գիտնոց:

Նոյն Մաքրիզի՝ յիշէ Ս. Միևսս անուամբ եկեղեցի մ'այլ Մարայ ճամբուն վըրայ, ընդ մէջ ջրմղին և հողակոյտից, (իրեն ժամանակին տեղագրութեամբ). մէկ կ'ըսուի՝ բայց երեք եկեղեցիք էին իրարու կպած. մէկն Յակոբկաց, միւսն Ասորուոց, երրորդն այլ Հայոց. ամէն տարի տօնախմբութիւն կ'ըլլար ասոնց մէջ, և կու ժողովէին բրխատոնեայք ի պաշտօն: Մաքրիզի ԺԵ դարուն առաջին կիսուն ատեն կու գրէր:

Աբուսահլի պատմագրոց մէջ կարելի է քանի մի հարեւանցի նկատողութիւնք կամ աւանդութիւնք այլ գտուին՝ մեր ազգին և մեր պատմութեան մերձաւորք կամ յիշեցուցիչք. ինչպէս տեղ մի գերեզմանոց յիշելով՝ կ'ըսէ, թէ Նեստորականք և Հայք այլ իրենց եկեղեցեաց մէջ թաղուին. բայց

առջի ըսածէն յայտնուի, թէ այդ տեղ յատուկ գերեզմանոց չունին: — Վերոյիշեալ Սյուլտ (Սայիտ) մեծ քաղաքին ստորագրութեան ատեն, եօթն դուռ ունի կ'ըսէ, որոց մին՝ յարեւելակողմն կոչուի Պսպալ-Արման, Հայոց Դռուն:

Եգիպտոսի բերոց և արդեանց վրայ խօսելով (Թղթ. 1), զատ յայլոց յիշէ և զըտուած « Իւղ Շողգամի, կարմիր Բողկի, Բալասանի իւղ, Ափիոն, Ապրաւիս և Մեղրօղի »: Թարգմանիչն կ'ըսէ թէ Ապրամիս *ارميس*, յունարէնէ առնուած *ἀβραμῆς*, Նեղոսի ձուկ մի է ծանօթ, համեղ և կարմիր, և զարմանայ, թէ ինչպէս Աբուսահլ՝ բուսական նիւթոց և իւղոց կարգին յիշէ զայն: Ինձ այլ տարակոյս գայ, միթէ չ'ըլլայ ի մեր նախնեաց յիշեալ Ապրաւ՝ Բալասանն կամ Բալասանի նման իւղն, որ և Ապրասդիոյ զբուած կայ:

Շատ տեղ Եգիպտոսի քաղաքաց և զաւտաց սկզբնաւորութիւնը պատմելով, Աբուսահլ աւանդական ազգաբանութեամբ Քամայ որդիք և թոռունք յիշէ, յատուկ և հասարակաց անձանօթ անուամբք, զորս՝ աւելի կամ պակաս՝ գուցէ յիշեն և ուրիշ արարացի պատմիչք. նախ քան զանոնք յիշէ և Նոյ նահապետի չորրորդ որդի մի՝ Ապու Նախտար անուն *ابو نبطر*, իմաստուն

և հնարող երկնագընտի, և եղանակաց բա-  
ժանման, և այլն, որ Ներբովթի ուսուցիչ  
կ'ըլլայ: Թարգմանիչն ամենեւին անծա-  
նօթ համարի այսպիսի անուն և անձն, որ  
մեզ թուի Միխայելի Ասորոյ, Վարդանայ  
և այլոց յիշած Մանիտոնն, իբր ծնեալ  
յետ ջրհեղեղի, հմուտ և հնարող յիշեալ  
գիտութեանց, որոյ հարազատ քոյր էր  
Աստղիկ, ըստ մերոց:

Եգիպտոսի հրաշալեաց մէջ, որ ըստ  
ոմանց քսան են, մէկ քանին յիշէ և Աբու-  
սահլ, յորս և Շարժուն սիւնն, *الاستوانة*  
*المتحركة* մարմար քարէ, 17 կանգուն բարձր,  
երկու կանգնաչափ տրամագծով, որ տար-  
ւոյ մէջ օր մի կու շարժի: Ուրիշ արա-  
բացի սլատմիչք յիշեն՝ ոմն այս ոմն այն  
մնիրայ, որ՝ թէ մէկն դպչի՝ յաջ ու ձախ  
կողմ կ'երեւայ. և մէկն այլ կ'ըսէ, թէ  
այնքան զգալի չէ շարժումն աչօք տես-  
նելով սեան վրայ, հապա անոր շուքին  
վրայ նայելով կ'իմացուի: Այս շարժուն  
Սիւնն կու յիշեցընէ մեզ Տաթեու վանաց  
Քառագան ըսուած շարժուն սիւնը. (որոյ  
որպէսն և ձենն այլ նշանակուած է ի Սի-  
սական, երես 234):

Յիշեցինք որ Աբուսահլի գիրքն վերջա-  
նայ քանի մի քաղաքաց անծանօթ շինողաց  
յիշատակաւ. անկէ անմիջապէս առաջ, որ

է ըսել վերջընթեր տեղեկութիւնն, է սոսկ  
 անկցորդ հատուած մի թամանին տեղոյ  
 վրայօք, և է այս. « թամանին تَمِين կո-  
 » չուած գիւղն: Ասոր մօտերն է Քարտա  
 » (կորդուաց) լեռն, ուր որ Նոյի ատեն  
 » կեցաւ տապանն, ձիւտի լեռնէն գալով.  
 » այնքան բարձր է, որ իրեն հաւասար  
 » լեռ չկայ երկրիս վրայ, և անկէ երկրիս  
 » չորս անկիւններն կ'երեւին: Վկայ Հնգա-  
 » մատեանն (Մովսիսի), թէ Աստուած, որ  
 » գովեալ ըլլայ, հով մի փչեց երկրիս  
 » վրայ, և ջուրերն սկսան նուազիլ, և աղ-  
 » բիւրք անդնդոց և պատուհանք (սահանք)  
 » երկնից դադրեցան, և ջուրք քաշուեցան  
 » յետ 150 օրերու. և Նոյի նաւն կամ տա-  
 » պանն՝ նստեցաւ եօթներորդ ամսոյն 27ին  
 » Քրդաց լեռանց վրայ, ի գիւղն թամանին  
 » կոչուած, համեմատ առաջուց ըսուա-  
 » ծին: Արուսահլ առաջուց բան ըսած չէ  
 ասոր վրայօք, գուցէ գրքէն դուրս ընկած  
 ըլլայ, կամ սկզբան պակսած թղթոց մէջ  
 յիշուած ըլլար, ուր համարուէր Հայոց  
 վրայօք գրելն: Գրեթէ համաձայն իրեն՝  
 շատ դարերով յառաջ գրած է մեր ծանօթ  
 Մովսէս Խորենացին, Հոփսիսիմեանց ու-  
 դեւորութեան պատմութեան մէջ. « Գաղտ  
 » գնացեալ ընդ մէջ կորդուաց՝ ընդ լեռոն  
 » Սողոփ (կամ Սաղուփ) ի Բերկրացուոց

» գաւառին... վասն այսր լերին ասի յԱ-  
 » սորւոց, թէ ի նուագել ջուրցն հեղեղաց  
 » եկաց տապանն ի գլուխ լերինն՝ որ է Սա-  
 » րարադայ. և ընդ մէջ անցեալ Սղոցա-  
 » ձուկնն՝ արգելու զնաւն. և անուն քաղա-  
 » քագեղջն կոչեցաւ թըմնիս կամ թըմնի  
 » (կամ թեմնի). այսինքն, թէ յայսմ տեղ-  
 » ւոջ ոգիք ութ ելին ի տապանէն» : Աւել-  
 » ցընեմք մեր հին պատմչին (խորենացւոյ)  
 խորհրդածութիւնն այլ. « Բայց, այսոքիկ  
 » թէ արդարք կամ սուտք՝ ինձ ոչ է փոյթ.  
 » բայց միայն զի հաճեցուցից (զընթերցո-  
 » ղիդ) մտացդ զտարփանս, վասն այնորիկ  
 » գրեմ քեզ զքնաւն » : Եւ դարձեալ աւել-  
 » ցընեմք, որ ինչուան հիմայ այլ լսուի այն  
 կողմերում այն աւանդութիւնն, ութ և ըստ  
 ոմանց քառասուն ոգւոց ջրհեղեղէն ետեւ  
 հօն դադրելը : Յոյն հեղինակք այլ յիշեն  
 այդ տեղ Սոլոփիա գաւառ, ուր և հիմայ  
 այլ կայ Պիրքէ տեղ կամ գեղ մի՝ համա-  
 ձայն Բերկրացւոց, որ պէտք էր գրուիլ Բեր-  
 կացւոց. օրինակ մ'այլ գրէ Բագրացւոց :

Գուցէ հաճոյ ըլլայ մերայոց՝ Արուսահլի  
 ըսած բան մ'այլ Ս. թովմաս առաքելոյ  
 վրայ, որ Հայոց այլ քան զայլ շատ առա-  
 քեալս յատուկ սիրելի և պաշտելի է, և  
 որոյ վրայ քրիստոնէութեան առաջին դա-

բերէն սկսեալ ինչուան մեր օրերուն՝ շատ  
 ստոյգ և անստոյգ բան զրուած է: Գրեթէ  
 ամենքն միաբանին թովմայի երթալուն ի  
 Հնդկաստան և շատ կռապաշտներ՝ ի Քրիս-  
 տոս հաւտացընելուն. ուր և ինչուան հի-  
 մայ մեծապէս պատուի նա, ի Մալապար:  
 Աբուսահլ կ'ըսէ, թէ յետ քարոզութեանն  
 և նահատակութեան՝ թաղեցին զնա մեծ  
 եկեղեցւոյն մէջ՝ որ իր կենդանութեան  
 ատեն շինուած էր, յետոյ իր անուամբ  
 կոչուեցաւ: Երբ զրին մարմինը թանկագին  
 և վայելչակազմ տապանի մէջ, տեսան որ  
 աջն անապական մնացեր էր. այլ աւելի  
 սիրեցին զնա և հաստատուեցան ի հաւատոս:  
 Բայց երբ եկեղեցիէն դուրս ելան՝ յան-  
 կարծ ծովուն ալիքներն խուժելով վիժելով  
 եկան չորս կողմ պաշարեցին, և եկեղեցին  
 անմտանելի եղաւ. սակայն ամեն տարի  
 ի տօնի Սրբոյն՝ յետ քաշուէր ծովն, եկե-  
 ղեցին բացուէր, և ինչուան հեռաւոր կող-  
 մերէ գային բազմութիւնք հաւատացելոց.  
 տապանն հանդիսապէս դնէին, և մէկ կող-  
 մէն ծակէ մի դուրս հանէին թովմայի անա-  
 պական աջը, և անոր մէջ դնելով զՍուրբ  
 Խորհուրդն, մի առ մի գալով հաղորդուէին.  
 և երբ ամենէն ետքը եկողն այլ ընդունէր  
 զՍրբութիւնը, աջն ինքն իրեն կ'ամփո-  
 փուէր, քահանայք այլ դարձընէին զտա-

պանն ի տեղը. երբ ամենքն ալ դուրս  
 ելնէին և հեռանային ի ծովեզերքէն, ծո-  
 վուն ջուրերն նորէն գային շրջապատէին  
 զեկեղեցին, մինչեւ ի միւս տարին:

Հայք կ'ընդունին Ս. Թովմայի նահա-  
 տակուիւն ի Հնդիկս, բայց մարմինը չեն  
 թողուր անոնց, այլ իրենց. վասն զի Առա-  
 քելոյն աշկերտներն, կ'ըսեն ըստ Յայս-  
 մաւուրաց, գողցան բերին յԱսորեստան.  
 ուսկից յետ շատ ժամանակի տարուեցաւ  
 Հայոց Աղձնեաց գաւառին վան կոչուած  
 տեղին, որ թուի Աւան. անկից այլ յետոյ  
 տարին « առաջնորդութեամբ լուսափայլ  
 » աստեղն, գնացեալ հասին ի գաւառն Ռըշ-  
 » տունեաց, ի վերայ գեղջն որ կոչի Պար-  
 » ծիս. և անդ դադարեալ եկաց աստղն՝ ի  
 » բարձր և ի հայեակ տեղւոջ, և անդ եղին  
 » զնշխարս Ս. Առաքելոյն ի քարեայ տա-  
 » պանի. և շինեալ եկեղեցի՝ եղին ի զբանդի  
 » եկեղեցւոյն. և շինեցաւ տեղին վանք  
 » միաբանակեցաց. և է մինչեւ ցայսօր »:  
 Երանի թէ և ի մեր մինչեւ ցայսօրս՝ այն-  
 պէս ըլլար, յայտնի և արժանապէս պա-  
 տուեալ:

Յետ ամենայն յիշատակաց Արուսահլի՝  
 որ մէկ կամ միւս կերպով մերազգեաց  
 կրնային հետաքննական ըլլալ, և զոր մենք  
 քաղելով թարգմանեցինք և ծանօթարանե-

ցինք, որովհետեւ հեղինակին բուն նպատակն էր և երեւցաւ՝ Ղփտեաց վրայ տեղեկութիւն տալ, ի մէջ բերենք անոնց մարդաթուոյ համար զբաժն ալ, թէ և իրմէ չորս հինգ դար առաջուան վիճակին, այսինքն Արաբացոց տիրապետելէն (յամին 640) իբր դար մի ետքը. « Եզրպտոսի Նուաճման գիրքն *كتات فضادل مصر*, » որոյ հեղինակն է Ալ-Քինտի, պատմէ, » թէ Ալ-Վալիտ Իպն Չուվաա եկաւ յԵզրպտոս հարկ ժողուելու, Հիշամ Իպն-Աբդլմէլիբի ամիրապետութեան ատեն, » (720-43 թու. Քրիստոսի), և ժողովըրդեան մարդահամար ընելու, և վեց ամիս կեցաւ ի վերին Եզրպտոս, երեք ամիս ի Ստորինն, 10,000 գեղէ աւելի համբեց, » որոց ամենէն փոքրին մէջ ալ 500 արու Ղփտի կար, որով բոլոր (արու) Ղփտեաց թիւն էր 5,000,000»: – Հիմայ ալ ըստ 1877 տարւոյ եղած ազգահամարի, Եզրպտոսի բոլոր բնակիչքն (բաց ի Նուրիոյ) 5,500,000 համարուին. յորս քրիստոնեայ Ղփտիք իբր կէս միլիոն, իսկ Ֆէլլահք (կամ Ֆէլլահինք) որ են արաբախօս և մահմէտական Ղփտիք՝ 4,500,000. Մնացեալքն են Պետէվիք 300,000, Թուրքք 10,000, նոյնքան և Հայք, Հրեայք 20,000, Եթովպացիք, Նուրիք, Սուտանցիք 43,000, Ասո-

րիբ 7000, Յոյնք 20,000, այլևայլ օտարականք, եւրոպացիք 90,000: Անցեալ դարուն վերջը Փոանկաց քննիչ գիտնականք 2,500,000 համարէին. հիմայ ոմանք ինչուան 7 միլիոն: Իսկ բնակութեան տեղիքն՝ 40 քաղաք, 3600 գիւղ. ըստ 1847 հաշուի ոմանց՝ 4450 էին գեօղք և քաղաք. հիմայ, բաց ի Սիւէզի պարանոցին կողմի երկիրներէն (Սիւէզ, Իսմայիլիէ, Բորդ Սախ) համարուին 60 վիճակք, 113 քաղաքք, 3340 գիւղք: Միջին իմն հաշուով թէ բնակարանաց թէ բնակչաց թիւն իբրեւ կէսն է Արուսահլի գրածին և ը դարումէջ եղածին: Հաւանօրէն մօտաւոր վերջի տարիներ աւելի ստոյգ մարդահամար եղած պիտի ըլլայ, զոր դեռ չունիմք ի ձեռին<sup>1</sup>:

1. Յետ տպագրութեան բանիցս՝ շնորհիւ բարձրապատիւ պաշտօնէից Արքայափայլ Խէտիվէին, ընդունեցանք երկու հատոր մանրամասն աշխարհահամարի 1882 տարւոյ. յորում՝ յատուկ էզիպտոսի նշանակուին 6,806,381 բնակիչք, ի 13,115 քաղաքս, գիւղս, աւանս, հանդրուանս, և այլն, Բնակչաց յիշեալ թիւոյ մէջ՝ միայն իբր 100,000 են հաստատ բնակարան չունողք:

## ՅԱԻԵԼՈՒԱԾ

Որքան և մեր նպատակն էր լուրջ Արուսահլի աւանդած ազգային յիշատակները հրատարակել, գրեթէ անհրաժեշտ հարկ եղաւ անոր ըսածները բացատրել կամ լրացընել, մանաւանդ իր նման և իր լեզուով գրողներով: Բաղդն այլ բերաւ այսպիսի մի. մեր (դիմացի երեսին) վերջին ծանօթութեան մէջ յիշեալ գրոց հետ, զատ յայլոց՝ կային Փռանկաց պետութեան ուսմանց պաշտօնէի յանձնարարութեամբ՝ Գահիրէ եղած հնարանական քննողաց տեղեկութիւններ, (Mémoires publiés par les membres de la Mission Archéologique française au Caire). որոց մէջ կայ (Գ. Պրակ Գ. հատորի. 1890) ճոխ գրուած մ'այլ, Պօղոս Ռաւէս գիտնականի, Մաքրիզի արար հեղինակին՝ Գահիրէի տեղագրութեան վրայօք. (Essai sur l'Histoire et sur la Topographie du Caire, d'après Makrizi. p. Paul Ravaisse). Ծանօթ է և յիշած այլ եմք, որ այս բազմաձմուտ արարացի հեղինակն (յատուկ անուամբ Թաքիատին) ԺԵ դարուն առաջին կիսում կու գրէր (+1441-2). շատ գրքեր քննելով և շատ ծերերու հարցընե-

լով, Եգիպտոսի՝ և առանձինն անոր մայրաքաղաքի (Գահիրէի) վրայօք՝ այնքան ծանօթութիւն ժողոված է՝ որքան ոչ ոք, և երկար համբերութեամբ մանրամասն ստորագրած է. բնագիրն՝ որ Խիրսր (Տեղագրութիւն) կոչուի, արդէն տպագրուած է ի Պուլազ, յամի 1853. ամբողջ թարգմանութիւնն այլ սկսուած է տպագրիլ, իսկ մասամբ՝ արդէն ծանօթ էր արեւելագիտաց։ Սպասելով հրատարակման ամբողջական թարգմանութեանն, առ այժմ Ռաւեսայ գրածէն կ'ուզեմք աւելցընել, Աբուսահլի և մեր յիշած ազգային եգիպտական վզըրկաց վրայ՝ քանի մի տեղեկութիւն այլ։

Արաբացոց Եգիպտոսի նոր մայրաքաղաքն՝ Գահիրէ՝ շինուած է իբր ի վերջ ժ դարու, (970 փրկչական թուին). մէկ մասին (վաճառափողոցի) շինող կըրնայ ըսուիլ նոյն ատեն՝ ուրացեալ զօրավարն Վարդան, որոյ անուամբ յիշուէր շէնքն շատ դարեր, և դեռ լսուի այդ անունն (կամ նոյն իրեն կամ ուրիշ անձին)։ Անկէ դար մի վերջը՝ (107) իր համագգի մեծահամբաւ և զօրաւոր վզուրկն Պատր ալձամալի էմիր էլ ձիւյիւշ՝ նորոգելով մայրաքաղաքը, իր մեծութեան և խալիֆայից զօրութեան յարմար՝ նոր և մեծ վզըրկարան մի շինեց (Տար էլ-Վիզարան) ի Պէր-

ճուան անուանեալ թագի, որ յետոյ դեպանաց ընդունարան եղաւ, և այնպէս այլ կոչուեցաւ (Տար էզ-զիյաֆաթ)<sup>1</sup>: Իր մեծոգի և գոռոզ որդին և յաջորդն Շահնշահ, որ խալիֆայէն աւելի փառօք և զօրութեամբ կ'ապրէր<sup>2</sup>, գոհ չեղաւ իւր հօր շինածովր. այլ արքունեաց և պետական շինուածոց հիւսիսային արեւելեան անկեան ընդարձակ կողմ մի գրաւելով, իւր 15 քառակուսի բնամզոն (քիլոմետր), շինեց հոյակապ ամենաճոխ նոր վզըրկարան ապարանք մի, որ իր արարական անուամբ կոչուեցաւ Տար էյ-Աֆգալիյէ, և շէնքին զմբէթներուն համար՝ սովորաբար կոչուէր Տար էյ-Քուպուպ (Գմբեթաւոր<sup>3</sup> ապարանք), և աւելի յաճախ՝ Տար էյ-Վեզիրուհ էյ-Քուպրա. Շահնշահի ամենայն յաջորդ վը-

1. Իր շինածներէն Յապած է դեռ Զուէլիլա կոչուած մեծ դուռն, քաղքին հարաւ-արեւելեան կողմը:

2. Կերպով մի խալիֆայ ժամանակին երախտապարտ էր Շահնշահի. ասոր հայրն և Մոսզանդիր խալիֆայն մէկ տարուան (1094) մէջ մեռան. Էզիպտացիք փոխանակ անոր Նիզար անդրանկան՝ երկրորդ որդին (Մոսզալի պիլլան) ընտրեցին. Աֆտաքին մեծ էմիրն ուզեց պաշտպանել զՆիզար. Շահնշահ դէմ կ'լաւ, յաղթեց, զերկուքն ալ բռնեց, և ապահովեց զՄոսզալի:

3. Միթէ այսպիսի վայելչութեան՝ եթէ բազանեացն համար էր՝ որ Ատանայի մօտիկ տեղ մի Գմբէքչոր կոչուէր, մեծին Լեւոնի օրերէն ինչուան իր յաջորդաց վերջն այլ (Տ. Սիսուան, 64. 533. 541):

գուրկը՝ մինչեւ ի բարձունքն խալիֆայու-  
թեան և ի տիրապետութիւն Սալահատտին  
սուլդանի (1174), այս նոր վզըրկարանի  
մէջ բնակեցան. նոյն ինքն Սալահատտին  
այլ և իր առաջին չորս յաջորդը՝ մինչեւ  
ի շինութիւն նոր արքունեաց. և այսոր հա-  
մար վզըրկատունն այլ այն ատեն (1174  
-228) կոչուեցաւ Տար ևս Սուրդանիյէ.  
յետոյ Շահնշահի շքեղ շէնքն այլ իր հօր  
շինածին պէս՝ Դեսպանաց բնակարան կար-  
գեցաւ, մինչեւ ի վերջ ժԳ դարու. անկէ  
վերջը այլեւայլ իշխանազունք և պաշտօ-  
նեայք գնելով այդ ընդարձակ ապարանքը՝  
իրենց ճաշակին համեմատ ձեւացուցին,  
մասն մասն քակեցին, նոր շէնքեր կանգ-  
նեցին. բայց մինչեւ ի ժԵ դար այլ կ'ե-  
րեւէին հին շէնքին մասեր. գուցէ դեռ  
շոշորդ մ'այլ նշմարուի:

Հիմակուան տեղազրութեամբ՝ այդ վզըր-  
կարանին արեւմտեան կողմն է Պապ էն-  
հասր փողոցն. արեւելեան և հարաւային  
կողմն՝ Մապիյատա փողոցն. հիւսիսայինն՝  
ձուվվանիյէ: Շահնշահի դաստակերտն բո-  
ւոր քարաշէն էր և լաւ յղկած, այլեւայլ  
դատիկոններ և յարկեր բաժնուած. բազ-  
մաթիւ սրահներ և սենեակներ, պարտէզ-  
ներ, բուրաստաններ, աւազաններ, և այլն,  
որոց ամենուն ջուր հասցընելու համար՝

120 ագուգայք յարմարած էին: Ապարա-  
նից ամենէն նշանաւոր և թանկ մասն կամ  
տեղին՝ էր գանձարանն, (Խազիւս), խա-  
լիֆայից գանձատան նման, աւելի կամ  
պակաս հարուստ. ուր Շահնշահ և յա-  
ջորդքն՝ ոչ միայն ոսկի և արծաթ, գոհար և  
դիպակներ, այլ և պէսպէս չքնաղ արուես-  
տագործ նիւթեր ամրարած էին. որոց գինն  
և զումարն՝ սովորական ոճով՝ բայց իրա-  
ւամբ կրրնայ ըսուիլ՝ անբաւ և անհամար.  
արդէն յիշած եմք (յ'երես 42) Շահնշահի  
սպանման ատեն՝ իր գանձատան մէջ զը-  
տուած միլիոնաւոր ոսկին: Այս չքնաղ և  
անգին նիւթոց ամենէն երեւելին կրրնամք  
ըսել՝ Շուպպարը (الشَّوْبَار). այսպէս կոչուէր  
այն վանդակապատը՝ որ խալիֆայից ատե-  
նական դահլիճը կամ մեծ սենեակը՝ յեր-  
կու բաժնէր. մեծագոյն մասն կոչուէր էյ-  
ֆաահ, ուր կենար ամէն ոք՝ որ տէրու-  
թեան պետին պիտի ներկայանար. իսկ սա  
բազմէր միւս մասին մէջ՝ որ կոչուէր էյ-  
Մարտարա: Պատմեն, թէ քանի որ այս  
սովորութիւնս չէր եղած՝ օր մի իւմմիա-  
տաց նահապետ Մոււվիէ խալիֆայն՝ Դա-  
մասկոսի մզկըթին մէջ սըրոյ հարուած մի  
ընդունելով, հնարեց այս միջարգել շուպ-  
պարը. որ Պաղտատի Ապպասեան աշխար-  
հակալ ամիրապետաց դահլիճին պատուարն

եղաւ, և որոյ զիմաց պատկառանօք և վա-  
 խով կենային Ասիոյ՝ (և երբեմն Եւրոպիոյ)  
 ամեն պետութեանց դեսպանք և իւր յա-  
 տուկ տէրութեան պաշտօնեայք. և ինքն  
 ահարկու ամիրապետն (խալիֆայն) ներսը  
 ի մաքսուրայն՝ բարձր գահու վրայ բազ-  
 մսօձ և ծածկուած, վճռական պատգամները  
 կու հրամայէր: ԺԱ. դարու կիսում մեծ  
 շփոթութիւն և ապստամբութիւն մ'եղաւ  
 ի Պաղտատ, և ամիրապետն (էլ-Քայիմ)  
 փախաւ. այն շփոթից ատեն ամբոխարարք  
 կողոպտեցին արքունեաց կահն ու գանձը,  
 և զրկեցին Եգիպտոսի խալիֆայից. երբ  
 Սալահատտին տիրեց ասոնց գահուն, Պաղ-  
 տատէն կողոպտուած թանկագին իրերն ալ  
 դարձուց անոր ամիրապետին. ասոնց թուէն  
 էր այդ երկզիմի բազմի վարագոյր շուպ-  
 պարն այլ, երկաթէ դարբնած շատ ճարտար  
 արուեստով վանդակն, հաւանօրէն՝ աւելի  
 ազնիւ մետաղով օծուած և զարդարուած:  
 կամ մեծութեանն համար, կամ իրեն յար-  
 մար համարելով՝ Սալահատտին չշարժեց  
 զայս տեղէն. իսկ տեղն էր շքեղաշուք  
 Շահնշահի դահլիճն կամ ատեանն. ուր,  
 նմանելով տիրապետ խալիֆայից, իր մե-  
 ծութեան և իրեն զիմողներուն միջաբաժին  
 կանգներ էր այդ նշանաւոր շուպպաքը: Երբ  
 յետ ժամանակաց՝ Գարասոնըոր էմիրն՝

Շահնշահի ապարանից գետնին վրայ շինեց իր հոյակապ շիրիմը, անոր մեծ պատուհանին վանդակ ըրաւ շուպպաքը կամ ասոր մէկ մասը. շիրիմն կանգուն կայ մինչեւ այսօր. բայց այն պատուհանն պատով հիւսուած է, և չի գիտցուիր թէ արդեօք հօն ծածկուած ֆիմօյ այն խորհրդաւոր վանդակն, որ Շահնշահի ճոխութեանց զըլխաւոր մէկն եղաւ:

Իրմէ վերջը իր գանձարանին մէջ պահուեցաւ պժգալի հաւաքում մ'այլ. — Խազիկար էր—բռնու. այսինքն, գանձ (կտրած) գլխոց՝ երեւելի իշխանաւոր անձանց. որոց առաջինն եղաւ Ատիլ իպն—Սալար վզուրկն, յաջորդն Ռոտովանի: Ի կարգի պատմութեան Աբուսահլի յիշուեցաւ այս ետքինիս գործը, և մեր Պահլաւունի վահրամին նախ զիմադրութիւնը, ապա յետ քաշուիլն. Մաքրիզի՝ որ զսա թագաւորաց թագ կոչէ, թաճ էլ Մուշուք, ասկէ առաջ և յետ Ապու Ալի Ահմէտի՝ Շահնշահի որդւոյն՝ (զոր և Գարիբար կոչէ, ուրիշ հայ վզուրկ մի եւս յիշէ, Եանիս Նազիր—էլ Էիւյիւշ անուամբ, (1131+4 միջոց), որ զուցէ նոյնպէս Շահնշահի որդի մի էր, և նոյնպէս բռնամահ եղած է: Ասոր յաջորդին յաջորդն էր գլխատեալն Ատիլ (1153). ասոր այլ յաջորդ Ապպաս իպն Ալի՝ Փութուն, խոռ-

վուժեան ժամանակ. զոր դադրեցուցեր է զօրաւոր Հայ մի, Ապու՛ր Ղարառ թաշայի կոչուած, եօթն կամ ութ տարի (1154-61) նստեր է վզուրկ. բայց ինքն այլ սպանուեր է. սակայն յաջորդեր է իր որդին Ապու խօճայ Ռուզէիք<sup>1</sup>. որ՝ չգիտեմ ինչպէս վախճանած է: Մաքրիզի յիշէ ասոր կամ իր հօրը շինած գետնափոր տեղ մի՝ հանդերձ փականօք՝ վզըրկանոցին մէջ: Սա յետին հայազգի վզուրկ եղած է՝ ի կարգի եօթանց՝ որք դար մի ժամանակի գրեթէ

1. Չսա և իր որդին՝ Չարհէ կամ Չտիկ անուանելով՝ յիշած էինք ի Ն. Շնորհ. և Պարագայն իւր, թաւայի՝ կրօնական հաւոյ դործ մի ըրած էր Եգիպտացոց. ասոնք դաւանութեամբ պարսկադէն իսլամ էին, այսինքն շիւ. որոց, ինչպէս յայտնի է, մեծ պաշտպանք և պատուելիք են Աւի ամիրապետին նահատակ համարեալ որդիքն, Հասան և Հիւսէին. ետքինիս գլուխն՝ երբ և է՝ յԱսկազոն բերուած պահուէր. երբ խաչակիրք եկան այս կողմեր, Շահնշահ գալով յայս քաղաքս՝ այդ գլուխը նորէն գմբուսել տուաւ, և վրան մատուռ մի շինեց. բայց Եգիպտացիք միշտ կասկածէին թէ օր մի շանարգին զայն քրիստոնեայք: Հիմայ թաւայի յորդորեց զխալիֆայն, և ճարտարութեամբ վերցընել տուաւ յԱսկազոնէ և բերել ի Գահիրէ (1153), ուր մզկիթ մ'այլ շինեց (Ճամի Սալի) և հօն կ'ուզէր դնել. բայց ժողովուրդն ստիպեց որ (Գուպէթ էտ-Տայլամ կոչուած) հասարակաց մզկիթին մէջ դրուի. որոյ գմբէթն այլ նորոգելով կոչեցին Մաշառ Հիւսէյինի. որ իբր դար մի վերջը՝ (1242) հրդեհով բոլորովին այրեցաւ:

երեք մասին՝ այդ գերագոյն եզրուական  
 զահր բազմեր են, բաղդով կամ քաջու-  
 թեամբ, օտարաց մէջ, օտարացեալք ի հայ-  
 րենի հաւատոց, բաց ի Վահրամայ. մինչ  
 ի նմին ժամանակի (ԺԲ դարու) իրենց գրա-  
 ւած երկրին գրեթէ սահմանակից երկրի  
 (Կիլիկիա) մի մէջ, հաւատարիմ ազգակիցք  
 (Ռուբինեանք) Տօրոսի քարուտ կողերը մա-  
 զըլցելով՝ ոտն առ ոտն առաջ անցան, իջան  
 կռուելով ու կորզելով և լեռ և դաշտ և ծով,  
 և կանգնեցին իրենց տուն և տէրութիւն.  
 և երկար տարիներ Սալահատինի յաջորդ  
 քուրդ և մէմլուք սուլտանաց հետ զործակ-  
 ցութիւն ունեցան՝ բարեկամաբար և թշնա-  
 մաբար. որոց՝ վերջապէս նուազած և նը-  
 ւաճուած՝ թողին իրենց ոսկիներով և ոս-  
 կորներով լի և դատարկ երկիրը. բայց թէ  
 հօն և թէ դուրսը՝ թողին նաեւ մշտալուր և  
 հեշտալուր համբաւ մի. մինչ այդ ընդվզեալ  
 վզըրկաց անուանքն՝ հազիւ նշմարուին ի  
 գիրս. և թէ քրքրեն զմիտս, ոչ գրգռեն  
 զսիրտս. նա և տխրախառն զարմանք մ'ազ-  
 դեն, երբ միաժամանակ և իբր ի միում  
 թատեր, դէմ ընդ դէմ երեւին՝ այն Միջա-  
 գետաց և Կիլիկիոյ Հայ իշխանք՝ ձեռնտուք,  
 և այդ վզուրկըդ՝ հակառակողը խաչա-  
 կրաց: Պատմիչք և երգիչք յետնոցս՝ հարկ  
 էր որ յիշէին անոնց անունը կամ գործն

եւս : Պատմութեան այս ամենամեծ մէկ դիպուածին ատեն (Խաչակրաց Երուսաղեմի տիրելուն), Եգիպտոսի վզուրկ էր վզըրկաց զոռոգագոյնն՝ Շահնշահ, միանգամայն և զօրապետ և ամենապետ. հարկ էր՝ որ թէ ոչ անձամբ՝ երեսփոխանով մի ելնէր անոնց դէմ. և ահա այս նոր դիւցազանց զովասանից դասապետն՝ Դասսոյ, (որոյ՝ յանկարծ մահուանէ զրկած քերդողայաղթ պսակն՝ այս տարի (1895), փառաւորսպէս տրուեցաւ ի յիշատակի իր 300ամեայ յորելինն), իր դիւցազին (Կոփրետոսի) արժանաւոր դիմամարտ հաներ է զՀայն Էմիրէն. որ՝ յետ ամենայն ջանից և քաջութեանց՝ խոցելով զմեծն այն Բույլիոն (Կոփրետ, il maggior Buglione), ինքնին կանչէ, « Ահա կու գամ քու ձեռքէդ մեռնելու.

Ecco, per le tue mani a morir vegno.

Ինչ որ պատմիչ մեր (Մ. Խորեն.) փափագէր իր հին դիւցազին (Չարմայրի) համար. « Կամիմ՝ յԱքիւլլեայ, և մի՛ յայլ ումեքէ » ի քաջացն » :... Աքիւլլէս և Կոփրետ. Չարմայր և Էմիրէն. Տրոյա և Երուսաղէմ. Հոմեր և Դասսոյ! Ինչ զարմանալի զուգաւորութիւնք պատմութեան և երեւակայութեան!

## Յ Ա Ն Կ

Ա Ն Ձ Ա Ն Ց Ե Ի Տ Ե Ղ Ե Ա Ց

---

- Աբղ ալ-Վանաղ աղ-Զունրի 28  
Աբուսահլ 6-13. 26. 49-51. 63.  
Ազգ-Հասան Պախիլանի 26  
Աթֆի՛ն Իթֆի՛ն (Թաղ) 20. 50  
Ահքամի՛լլահ խալիֆ 22  
Ամեր խալիֆ 42  
Այգեստան ա. ալ Պուզան  
Անանիա եղս. Եզիպա. 18  
Անուբ ճղնաւորի վանք 54  
Ս. Անտոն և վ. 50  
Ապու Ամր որդի Շահնշահի 42-3. 69  
Ապու՛լ Ֆարահ ար-Բայիս 8  
Ապու Նախուր ո. Նոյի 55  
Ապու Պէքր եզբայր Սալահաստիների 33  
Ապպաս իպն Ամր՛լ Ֆութուհ 69  
Ատիլ իպն Սալար 69  
(ալ) Ատհրա Էկեղեցի 19  
Ս. Արմենիոս 52  
Ս. Արսէն 48  
Արսինոյէ լիճ 51  
Աւազակք 42  
Աֆտալ ա. Շահնշահ

- Բաստիզար ? 53  
 Բրտի վանք 35  
 Գահիրէ 14. 19. 21. 37. 38. 64. *ևն.*  
 Գասիմ Խալիլ բժիշկ 26  
 Գասր աղ-Զիւմրիւտ 21  
 Ս. Գէորգ վանք Հայոց 51  
 — *հկեղեցի* 35. 39  
 — — *ի Մայտում* 51  
 — — *ի Շինարա* 53  
 Գրիգոր Վկայասէր 15. 17. 23. 35  
 — *հօրեղբօրորդի Ն. Շնորհ.* 29. 44  
 — *քհոռորդի Վկայասիրի* 17  
 — Տղայ 31  
 — *ալ Քայիս հպս.* 50  
 Ս. Գր. *հկեղ. ի Տուրա* 37  
 Դաստոյ 72  
 Եանիս Նազիր էլ ճիւղիւշ 69  
 Եգիպտոս 11. 14. 15. *ևն.*  
 Եսայի *հպս.* 28  
 Եւտիքիոս (Սայիտ) 10  
 Զաւիէ վիճակ 51  
 Զաւիւա. Զուվայիւա 22. 24. 31  
 Զմբխտեայ պալատ 21  
 Զուհրի վանք 26-28. 31. 47  
 Էմիրէն 72  
 Թաւայի ապուլ Ղալատ 70  
 Թաճ առ-տաււա տ. Վահրամ  
 Թամիլայի՛ վանք 40  
 Թամանին գեօղ 57  
 Թաքիատտին Մելիք 30. 32  
 — *տ. Մաքրիզի*  
 Ս. Թէոդօրոս *հկղ.* 35  
 Ս. Թովմաս վ. *ի Հայս* 58-59  
 Ս. Թովմաս առաք. *և հկղ. ի Մալապար* 59

- Ինանտաք թաղ 39  
 Լեւոն (Մեծագործ) 31  
 Խահալ զատի 45  
 Խաչակիրք 72  
 (Ա) Խուսու 52  
 Կիրեղ պատրիարք Ղփտեաց 35. 39.  
 Կոփրեա 72  
 Հայք յԵգիպտոս 11. 15. 18-22  
 — Վլուրիք 33-49. 64-72  
 — Պաշտօնեայք 29. 48  
 — Վանորայք 50  
 — Գուոն Ի Սայիտ 55  
 Հաչէն ամիրապետ 46  
 Հասան ո. Աւայ 70  
 Հատալպա Ղուզի 20  
 Հարաթ ար-Ոսում թաղ 30  
 Հարմանուս տ. Արմենիոս  
 Հաֆրդ խալֆ. 20-21  
 — ալ Իմամ 33. 43  
 Հիշամ ամիրապետ 61  
 Հիւսէին ո. Ալի 70  
 Հիւսէյինիէ թաղ 20  
 Ղուզք. Ղօզք. 18. 22. 41  
 Ղփտիք 29. 32-34. 53  
 Ճերմակ վանք 47  
 Ճիղէ դաւառ 51  
 Ճիրճէ վիճակ 54  
 (Էմիր ալ) Ճիւլիւշ տ. Պատր  
 Ճիւլիւշիէ զօրախումբ 19  
 Ճիւտի լերինք 57  
 Մալապար 59  
 Մահպուպ հոսս. 11  
 Մայտուն գղ. 51  
 Մանիտոն ո. Նոյի 56

- (Ապու) Մանսուր 37  
 Մաշառ Հիւսէին 70  
 Մաշքուր (Իպն) 37  
 Մասլէյասա փողոց 66  
 Մարանգաթ վիճ. 54  
 Մարկոս պատրիարք 36  
     — ալ Քանդար 10  
 Մաքրիզի 13. 34. 52. 54. 63  
 Մհլքիւք 22. 51  
 Մերիս լիճ 51  
 Ս. Մերկեր հկզ. 35  
 Մէմուքք 71  
 Ս. Մինաս հկզ. 36. 54.  
 Մուսվիէ ամիրայ. 67  
 Միւրիզ խալֆ. 38  
 Միքայէլ Նրեշա. հկզ. 53  
 Մուղաֆֆար Մհլէք 33  
 Մուղանդիր խալֆ. 15. 38  
 Մսր 17 ա. Գահիրէ  
 Ս. Յակովբ հկզ. ի Մսր. 14. 16  
     — վանք յԵրսզմ. 23. 25. 27  
 Յովնաննէս Գրքեցի վ. 54  
     — Ս. հկզ. 18. 24. 30-1  
 Յովնաննէս պատրիարք 36  
 Յովսէփ Նանապետ 51  
 Ներսէս Շնորհալի 44  
     — հպս. Երուզմ. 28  
 Նուբիա 38  
 Նուրէտտին սուլդան 18  
 Շնուտ ճգնաւոր և վանք 47  
 Ս. Ոնոփրիտի վանք 41  
 Ուսքուֆ (Իպն) շէյխ. 41  
 Պալտին Ա. 42  
 Պանուճալիս 52

- Պահիր ալ-ճիզէ լիճ 42  
 Պապ էն-Նասր փողոց 66  
 Պատր ալ-ճամալ 15. 17. 35. 37. 64  
 Ս. Պափնուս 41  
 Պուսդան (Սյգեստան) թաղ 14. 28. 30  
 Ռայանիէ զօրախումբ 19. 50  
 Ռիստովան վալախչի 46. 69  
 Ռուբէն Բ 32  
 Ռուբինեանք 71  
 Ռուզէիք Ապու խօճա 70  
 Սալանատին 18. 31. 38. 66. 68  
 Սանակ հոյեակոպու Երսզմ. 27. 28  
 Սայխ. Սիւլխա վիճ. 46. 52. 55  
 — Իպն էլ Պատրիկ 10  
 (Բորդ) Սայխ 62  
 Սայֆատտին հզր. Սալանատ. 30  
 Ս. Սարգիս վանք յԵրսզմ. 24  
 Սողոմոն թզր. Նուբիոյ 38  
 Վահրամ վզուրի 21. 33. 44-7. 69. 71  
 — Սայխ առ-տաւա 29  
 (Ալ) Վայխ Իպն Զուվաա 61  
 Վասակ հզրայր Վահրամայ 44. 46. 47  
 Վարդան Հուսոմ 48. 64  
 Վզրրկատուն Գահիրէի 64-65  
 Տահուր դղ. 50  
 Տուրա, վանք և հկղ. 35-36  
 Քալանուն Նասր սուլտան 34  
 Քալուսանա 54  
 Քայիմ ամիրզ. 68  
 Քիֆդ որդի Մհարեմի 51  
 Քուսայիր վանք 37. 47  
 (Իպն ալ) Քուսդալ 36  
 Քուրդք 18. տ. Ղուզք  
 Ֆայում 51

Ֆաշն 53

Ֆարվա (Ասու.) զուկակ 48

Ֆաքի ալ-Պահա 18

Ֆաքի՛ն աա-թուսի 31. 32

Ֆուսսսսս 28. 48

